

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԻԼՎԱ ՎԱՐԴԱՆԻ ՊԱՊԻԿՅԱՆ

**ՀԱՅ ԿՐՈՆԱԵԿԵԴԵՑԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇՇԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ
ՋԱՐԳԱՑՈՒՄԸ**

**Ժ.02.01. “Հայոց լեզու” մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ռ.Կ. Սաքապետոյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Գ.Կ.Խաչատրյան

Բանասիրական գիտությունների դոկտոր , պրոֆ. Ա.Հ.Աբաջյան


ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. ապրիլի 17-ին՝ ժամը 15-ին, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մարտի 10-ին :

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  Ն.Մ.Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վերջին մի քանի տասնամյակում արդյունավետ աշխատանք է կատարվել առանձին գիտաճյուղերի ուսումնասիրության ուղղությամբ, հրատարակվել են մեծ քանակությամբ հոդվածներ և աշխատություններ:

Յուրաքանչյուր բնագավառի տերմինահամակարգ պետք է դիտարկել ընդհանուր բառապաշարի շրջանակում՝ նկատի առնելով, որ այն բառապաշարի մի ենթահամակարգ է՝ իրեն հատուկ գործառնությամբ:

Ինչպես հայտնի է, կրոնը հասարակական գիտակցության ձև է, և կրոնական հավատալիքների փոփոխությունը սերտորեն կապված է հասարակության զարգացման, հասարակարգերի, սոցիալ-տնտեսական փոփոխությունների, մշակույթի զարգացման հետ: Կրոնները որոշակիորեն կրում են դրանք դավանող ժողովուրդների պատմության յուրահատկության կնիքը: 301 թ. Հայաստանը պաշտոնապես ընդունում է քրիստոնեությունը, որը հետագայում դառնում է ազգային կյանքի պահպանման կարևոր գործոններից մեկը, նախանշում հոգևոր կյանքի, մշակույթի, աշխարհընկալման ուղենիշները, ամրակայվում ազգային գիտակցության մեջ: Քրիստոնեությունը Հայաստանում ձեռք է բերում ազգային նկարագիր:

Կրոնակեղեցական տերմինաշերտի շատ բառեր նախագրային շրջանից են՝ գրավոր ավանդված v դարից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ներկայացվող հետազոտության նպատակը հայ կրոնակեղեցական բառաշերտի համակարգային քննությունն է, հայոց լեզվի տարբեր փուլերում այդ կարգի բառերի գործառական-իմաստային յուրահատկությունների բացահայտումը: Այդ նպատակի համար անհրաժեշտ ենք համարել լուծել մի քանի խնդիրներ.

ա. քննել բնիկ բառաշերտն ու տարբեր լեզուներից (ասորերեն, հունարեն, իրանական լեզուներ) կատարված փոխառությունները և դրանց իմաստային փոփոխությունները պատմական զարգացման ընթացքում,

բ. կատարել որոշ բառերի իմաստագործառական քննություն,

գ. կատարել կրոնակեղեցական բառերի շերտաբանական, բառակազմական -վերլուծական քննություն,

դ. ցույց տալ այս ոլորտի համալրման աղբյուրները,

ե. ներկայացնել առավել գործածական տերմինային և ձևաբանական կաղապարները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՈՒՅԹԸ: Առաջին անգամ քննության է առնվում հայ կրոնակեղեցական բառապաշարը լեզվական տեսակետից, համակարգված քննվում են պատմական զարգացման ընթացքում կրոնական բնույթի բառերի իմաստային փոփոխությունները՝ բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում,

բառիմաստի շրջում՝ կատարված տարբեր հիմունքներով՝ զուգորդություն, կցորդություն, ապաստուգաբանություն, գործառութային, մշակութային փոփոխության, բառի տերմինացումով և ապատերմինացումով առաջացած իմաստափոխություններ և այլն: Քննության նյութ են դարձել եկեղեցու տերունական խորհուրդների, հայ եկեղեցու նվիրապետությանը վերաբերող բառերը, կրոնական բնույթի բառերից և անձնանուններից առաջացած որոշ սրբավայր-տեղանուններ, “չարը” խորհրդանշող սուրբգրային մի շարք բառեր: Կատարվել են բառաքննական դիտարկումներ, առաջարկվել նոր ստուգաբանություններ: Հետազոտության մեջ առաջին անգամ կատարվել է կրոնակեղեցական տերմինների շերտաբանական և բառակազմական վերլուծություն, դիտարկվել են տերմինահամակարգի համալրման ներքին աղբյուրները, տրվել տերմինային և ձևաբանական կադապարները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության տեսական արժեքն ամենից առաջ այն է, որ կրոնակեղեցական նյութի հիման վրա քննության են առնվում այդ բառերի իմաստային, համակարգային, կառուցվածքային երևույթները, վեր են հանվում կրոնակեղեցական տերմինահամակարգին բնորոշ առանձնահատկությունները: Տերմինաբանական ցանկացած հետազոտություն ունի որոշակի գործնական նշանակություն: Աշխատանքը կարող է օգտակար լինել բանասերների, կրոնի և մշակույթի հարցերով զբաղվողների համար: Հավելվածում ներկայացված տերմինները կարող են կիրառվել ինչպես կրոնական բնագավառի, այնպես էլ ժամանակակից հայոց լեզվի գիտական տերմինաբանությամբ զբաղվողների կողմից: Տերմինացանկի հիման վրա կարող է կազմվել կրոնակեղեցական տերմինների բառարան:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

Սույն ատենախոսության համար նյութ են ծառայել կրոնագիտական ուսումնասիրությունները, առկա բառարանները և հանրագիտարանները, մատենագրական աղբյուրները: Աշխատանքը կատարվել է տարածամանակյա և համաժամանակյա վերլուծության մեթոդներով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, համառոտագրություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելված-տերմինացանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը 264 համակարգչային էջ է: ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենանախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արդի հայերենի և հայոց լեզվի պատմության բաժինների միացյալ նիստում և երաշխավորվել պաշտպանության: Աշխատանքի

հիմնական մասը հրատարակվել է առանձին գրքով¹: Ատենախոսության վերաբերյալ տպագրված է 19 հոդված գիտական ժողովածուներում և հանդեսներում:

Ներածության մեջ համառոտակի ներկայացվում է կրոնի՝ որպես հասարակական գիտակցության ձևի ընկալումը: Կարևորվում են Հայաստանում քրիստոնեության մուտքը և նրա տարածումը, ինչպես նաև հայոց գրեթե ստեղծման դերը (գրեթե գյուտից հետո սկսվում է թարգմանական հսկայածավալ աշխատանք, որի խոշորագույն կոթողը Աստվածաշունչն է, զուգահեռաբար թարգմանվում են եկեղեցուն և կրոնին վերաբերող բազմաթիվ գործեր): Կատարվում են ընդհանուր դիտարկումներ լեզվի բովանդակային կողմի՝ իմաստի փոփոխությունների վերաբերյալ: Բառի իմաստները, պայմանավորված լեզվական և արտալեզվական զանազան գործոններով, կրում են տարաբնույթ փոփոխություններ²: Ամիջակա-նորեն առնչվելով ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքին՝ լեզվի բառապաշարը ոչ միայն քանակապես, այլև իմաստային տեսակետից անընդհատ հարստանում է, բառերի որոշ իմաստներ էլ հնանում են: Բառապաշարի կրոնանեկեղեցական բառաշերտը հիմնականում ավանդապահ է, այնուամենայնիվ, պատմական զարգացման ընթացքում այստեղ ևս տեղի են ունեցել զանազան բնույթի իմաստային փոփոխություններ, որոնց քննությանն է նվիրված սույն հետազոտությունը (քննվել են այն արմատները (բառերը), որոնք առաջնային նշանակությամբ են կրոնական բնույթի): Դիտարկված բառերի համար բերված են բնագրային օրինակներ, տրված է դրանց հաճախականությունը՝ ըստ Ա.Գրքի համաբարբառի (անհրաժեշտության դեպքում համեմատվել են տարբեր լեզուների

¹ Ս.Պապիկյան, Հայերենի կրոնանեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, “Էդիտ պրինթ” հրատ., Ե., 2011թ. (288 էջ):

² Աշխատանքում բառերի ծագումը տրված է ըստ Հ.Աճառյանի “Հայերեն արմատական բառարանի” (ՀԱԲ) և Գ.Ջահուկյանի “Հայերեն ստուգաբանական բառարանի” (ՀՍԲ), նաև Գ. Ջահուկյանի “Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան” (Ջահուկյան, 1987) աշխատության: Առանձին դեպքերում բերվում են այլ լեզվաբանների կարծիքները (դրանք ներկայացված են ատենախոսության մեջ): Բառերի իմաստների փոփոխության գործընթացը պարզելու նպատակով համեմատվել են ՀՀԲ-ի (Բառգիրք Հայկազեան լեզուի), ՆՀԲ-ի (Նոր բառգիրք հայկազեան լեզուի), ԱԲ-ի (Առձեռն բառարան հայկազեան լեզուի), ՄՀԲ-ի (Միջին հայերենի բառարան), ՀՀԲ-ի (Ստ.Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան), ԱՀԲԲ-ի (Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան), ԺՀԲԲ-ի (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան), ՆԲ-ի (Ա.Էլոյան, Նորաբանությունների բառարան), Լ.Հովհաննիսյանի “Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր”-ի, նաև ՀՀԲԲ-ի (Հայոց լեզվի բարբառային բառարան), ՀՀԼԲ-ի (Ա.Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան), ԳՀԲ-ի (Ռ.Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան), ԲՍԳ-ի (Բառարան Սուրբ գրոց), ԶՀ-ի (“Քրիստոնյա Հայաստան”. հանրագիտարան) տվյալները, նաև օտարալեզու շատ բառարաններ:

համապատասխան օրինակների հետ): Աշխատանքում չենք անդրադարձել հայկական դիցանունաբանությանը, քանի որ այն վերաբերում է հատկանունաբանությանը և առանձին ուսումնասիրության նյութ է: Հայկական դիցարանը մանրակրկիտ ուսումնասիրել են տարբեր հեղինակներ՝ Հ. Գեյցեր, Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Տաշյան, Գ. Ղափանցյան, Կ. Տրևեր, Գ. Սարգսյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ:

Առաջին գլուխը (*Կրոնանկեղեցական տերմինների ծագումնաբանական քննություն*) բաղկացած է 2 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում (*Հնդեվրոպական ծագման բառերը կրոնական տերմինահամակարգում*) դիտարկել ենք հ.ե. ծագման բնիկ հայերեն հետևյալ բառերը և պատմական զարգացման ընթացքում դրանց իմաստների փոփոխությունները՝ *աղօթ(ք)*, *անէծ(ք)*, *Աստուած*, *աւելոյ*, *դիք*, *երդումն/ն'*, *երէց*, *է*, *ընծայ*, *թով/ել* կրօն, *հոգի*, *ծօն*, *մախաղ*, *մաղթ(ել)*, *մեղ(ք)*, *սուրբ*, *տէր*, *տօն*, *քաւ(ել)*: Հայտնի է, որ այս բառերի մի մասը հնդեվրոպական շրջանում կրոնապաշտամունքային արժեք է ունեցել, մի մասն էլ նման արժեք է ստացել հետագայում:

Աղօթ(ք): Անեզական է: Գ. Ջահուկյանը բխեցնում է հ.ե. **olbuti*(?)՝ **el-* բնածայնական արմատից: Գրաբարում՝ “աղաչանք առ Աստուած, մաղթանք, խնդրուածք, պաղատանք, խօսք ընդ Աստուծոյ”: *Աղօթել-ը և աղաչել-ը* կազմված են նույն արմատից, նաև հոմանշային եզրեր ունեն: Ս. Գրքում ունի 397 վկայություն³: Բաղադրված են բազմաթիվ բառեր: Միջինհայերենյան են *աղօթականութիւն*, *աղօթակոչ*, *աղօթայար* և այլն: ՀԲԲ-ում *աղօթարան-ը* հանդես է գալիս համանունական շարքով՝ 1.”աղօթատեղ, եկեղեցի” և 2.”արևագալ, “արշալույս”. *աղօթել-ը*, բացի առաջնային “աղաչել” իմաստից, ունի նաև “բժշկել աղօթքի միջոցով” իմաստը: Նոր են *աղղթածայն*, *աղղթերգ*, *աղղթականչ*, *աղղթամայրյան* և այլն (ԱՀԲԲ), ՆԲ-ում՝ *աղղթաբույր*, *աղղթամրմունջ*, *աղղթասացություն*, *աղղթքանման*: Միջնադարում հայտնի *աղղթագրությունը* քրիստոնեության մուտքից հետո կանոնականացվել է. հիմնականում ամփոփված է աղղթագրքերում. նաև միջնադարյան մատենագրության տեսակ է: **Անէծ(ք)**: Անեզական է՝ “նզովք, բանադրանք, անաթեմայ”:⁴ Ծագում է հ.ե. **neid-* “նախատել, հանդիմանել”, ըստ Ջահուկյանի՝ հ.ե. **oneid-s-* արմատից: Գրաբարում այս արմատով բաղադրված բառերը ենթարկվում են *է>ի* հնչյունափոխության՝ *անիծաբեր*, *անիծադրութիւն* և այլն, ՀԲԲ-ում վկայված են անհնչյունափոխ ձևեր՝ *անէծքաբան*, *անէծքաբերան*, *անէծքաչոր*: Արդի հայերենում որոշ բառեր հանդես են գալիս տարբերակներով՝ *անիծախառն* - *անեծքախառն*, *անիծաչոր* - *անեծքաչոր* և այլն: *Անիծել-ի* հարակատար դերբայը՝ *անիծած*, և գրաբարյան անցյալ դերբայը՝ *անիծեալ* (*անիծյալ*), ձեռք են բե-

³ Տե՛ս Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Ս. Էջմիածին, 2012 (այսուհետև Աստվածաշունչ մատյանի համաբարբառը չի նշվի, կբերվեն միայն թվական տվյալները):

րել անկախ գործածություն, ունեն բառարանային արժեք: Կան բազմաթիվ դարձվածքներ՝ *անեծքը բռնել*, *անեծք թափել* և այլն: Արդի հայերենում բառը, պահպանելով իր հիմնական՝ կրոնական իմաստը, ունի նաև “դժբախտություն”, “նզովքի խոսքեր” իմաստները: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում կցորդության հիմունքով, նաև՝ ապատերմինացում: **Աւետ(աւէտ):** Հանդիպում է *աւետ-իք* ածանցավոր ձևով և որպես բայ՝ *աւետ-ել*: Գրաբարում ունեցել է անկախ գործածություն՝ “բան և լուր ուրախալի և բերկրալի, ողջույն”: Ըստ Էդ.Ադայանի՝ ծագում է հնխ. **aud* “խոսել” արմատի **auēd*, **auēid* աճած ձևերից⁴: Աստվածաշնչում *աւետ(աւէտ)*-ը վկայված չէ. (*աւետարան*-ն ունի 81, *աւետարանել*-ը՝ 57 վկայություն): Գրաբարում այս արմատով կազմված բազմաթիվ բառերի մեծ մասը նախապես կրոնական իմաստ չի ունեցել: Քրիստոնեությանը առնչվելով՝ որոշ բառեր մտնում են կրոնական տերմինահամակարգի մեջ: Միջինհայերենյան են *աւետաբարբառ*, *աւետալի*, ՀԲԲ-ում ավելացել են *աւետարանագրել*, *աւետարանական*, *աւետարանացոյց*, *աւետիս* բառերը: *Աւետիս*-ը (*աւետիք* բառի հոգն. հայց.) առանձին գլխաբառ է, որը, կցորդային հիմունքով իմաստափոխվելով, ստացել է նոր իմաստ՝ “Քրիստոսի ծննդյան գովք”: Կան բազմաթիվ դարձվածքներ: Արդի հայերենում գործածական է *ավետիք* (ավետիս) ձևը: *Ավետ*, *Ավետիս*, *Ավետիք* բառերը բառիմաստի նեղացմամբ դարձել են հատկանուններ, կրճատմամբ՝ Ավ: **Դիք:** Գործածվում է անեզաբար՝ “կուռք. սուտ աստուածք”: Ծագում է հ.-ե. **dhēs-*, ըստ Ջահուկյանի՝ **dhēses*՝ **dhes* կրոնական բնույթի արմատից: Ջահուկյանի կարծիքով՝ գոյություն է ունեցել նաև եզակի ձևը, ինչպես երևում է ուրարտական տեքստերում հանդիպող *Arsibedi-ni* դիցանունից, որ արտացոլում է հին *Arciwē-di* (Արծուադի-ք) բառը (Գ.Ջահուկյան, Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, ՊԲՀ, 1992, 1): Ս.Գրքում ունի 51 վկայություն: Քրիստոնեության մուտքով ստանում է հեթանոսական աստծու իմաստ: Բաղադրվում է *դից*- և *դից*- ձևերով: *Դից*-ով կազմված բառերի քանակը գերակշռում է գրաբարում: Հնաբանություն է. գործածվում է գեղարվեստական ոճում: **Երդում(ն):** Հ.-ե. **ertu-* արմատից⁵, ըստ Ջահուկյանի՝ հ.-ե. **urēdhu-*(⁶) **uer*՝ “հանդիսավորապես ասել, խոսել”: *Երդումն* բառը արմատական ձև դիտելը որոշ պայմանականություն ունի: ՆՀԲ-ում՝ “1.Կոչումն անուանն աստուծոյ և աստուածայնոց ի վկայութիւն. երդնուլն, և բանն երդուեալ: 2. Նզովք”: Ս.Գրքում՝ 87 վկայություն: Գրաբարում *երդումն-խոստումն-ուխար* բառերը հոմանիշներ էին: Աշխարհաբարում բառի առաջնային իմաստը կրոնական չէ: Գրաբարում էլ կրոնական իմաստը միշտ չէ, որ հստակ է: Ս.Գրքում կարևորվում է *երդումը*

⁴ Էդ. Ադայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 35:

⁵ Աճառյանի կարծիքով՝ “բուն արմատն է **երդու*: Ըստ այդմ՝ *երդնուլ* ծագում է հնագույն **երդունուլ* բայից և *երդումն*՝ հնագույն **երդուումն* ձևից” (ՀԱԲ) (տե՛ս նաև Հ.Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004, 358):

պահելը, և, ընդհակառակը, խիստ դատապարտելի է համարվում երդմնաստությունը: Հայկական էպոսում երդումը բացարձակ արժեք է, և հերոսների թուլացման միակ պատճառն այն խախտելն էր: Դարձվածքներ՝ *երդում անել (տալ)*, *երդումը ջրի պես խմել*, *երդում ուրել* և այլն: Արդի հայերենում բառը բազմիմաստ է, սակայն նրա իմաստներից ոչ մեկը ուղղակիորեն չի առնչվում կրոնին: Կազմվել են նոր բառեր՝ *երդմնաթերթ*, *երդմնաթուղթ*, *երդմնագիր* և այլն (ԱՀԲԲ): **Երէց:** Ծագում է հ.-ե. **preisk'hu-hg*՝ “աւագ, մեծ, քահանայ”, ըստ Զահուկյանի՝ հ.-ե. **preisku-*՝ **per-* “առաջ” արմատից: Տարարժեք է. ունի ած. և գոյ. գործառույթ՝ “ավագ, մեծ”, “քահանա”: *Երէց* անվանում են գյուղի քահանաներին: Բաղադրություններ՝ *երիցապետ*, *երիցեղբայր*, *ավագերէց*, *արքերէց* և այլն: Միջինհայերենյան են՝ *երէցկնիկ*, *երէցտիկին*: Համեմատաբար նոր է *երեցփոխան*-ը՝ “եկեղեցու տնտեսական գործերը կառավարող անձ” (ԱՀԲԲ): Ս.Գրքում ունի 64 վկայություն ածականական և գոյականական իմաստներով: Բառի առաջնային իմաստը արդի հայերենում ածականական է՝ *տարիքով ավելի մեծ*: **Է:** ՀԱԲ-ում, ՀՍԲ-ում արմատը, որպես Աստծու անուն, չի արձանագրված: ՆՀԲ-ում՝ “է -մանավանդ է կամ էնն՝ Աստուած. ինքնագոյակ անեղ...”: Ս.Գրքում՝ 16 վկայություն (համապատասխան համարներում ռուս.՝ *Сущий*, լատ.՝ *Deus*, ֆրանս.՝ *Dieu*, հուն.՝ *θεός*): Մեր մատենագրության մեջ բառի գործածությունը հաճախական չէ. որպես Աստծու անուն՝ գրվում է հայկական եկեղեցիների խորանների վերևի մասում: *Աստված* բառի ծագման վերաբերյալ հայտնվել են տարբեր կարծիքներ: Վերջին շրջանում նոր ստուգաբանություններ են առաջարկել Վ.Համբարձումյանը և Արծ. Սահակյանը: Արծ. Սահակյանը առաջարկում է իրանական ծագման վարկած՝ զրադաշտական մարմանավոր ոգու (*astvat*) անվանումից⁶: Քրիստոնեության մեջ բառը հոգնակի թվով չի գործածվում և որոշիչ հոդ չի ընդունում: Ս.Գրքում՝ 4737 վկայություն. (ՆՀԲ-ում՝ բաղադրված է 304, ՀԲԲ-ում՝ 365, ԱՀԲԲ-ում՝ 108, ԺՀԼԲԲ-ում՝ 80, Հովհաննիսյանի ԳԲ-ում՝ 39 բառ). ունի 28 հոմանիշ՝ *Տեր*, *Արարիչ*, *Ստեղծող*, *Երկնային դատավոր*, *Բարձրյալ*, *Երկնավոր* և այլն: *Աստված*-ով կազմված են բազմաթիվ կայուն կապակցություններ և դարձվածքներ: *Աստված* իմաստով է գործածվում *Տէր* բառը՝ **տի-*”*մեծ*” +*այր*՝ “տէր, մեծ, իշխան, գլխատր, յատկապէս նաև Աստուած” (ՆՀԲ): *Տէր*-ը պայմանականորեն կարելի է համարել կրոնական տերմին: Գրաբարում բառի առաջնային իմաստը կրոնական չէ՝ “Իշխան ծառայից կամ իր բաներուն” (ՍԲ): Բաղադրության մեջ է մտնում 4 ձևով՝ *տէր-*, *տիր*, *տեսան-*, *տեր-*: *Տէր*-ը՝ “Աստված” իմաստով, Ս.Գրքում ունի 8907 վկայություն: *Տէր*-ը, ինչպես ռուսերենում “Господь”-ը, կարծում ենք, ունեցել է իմաստային փոփոխություն կցորդային հիմունքով: Ռուսերենում բառիմաստի փոփոխության

⁶ Տե՛ս Արծ. Սահակյան, “Աստուածը”՝ քրիստոնեական կրոնամշակութային համատեքստի նշան, ”Հայ աստվածաբան”, Բ, Ե., 2008, էջ 7-12:

համար հավանական է համարվում “*глава семья > владыка > бог*”⁷ անցումը. հայերենում *Տէր > Աստված* անցումը հնարավոր է *տէր*-ի “իշխանավոր, իշխող, կառավարող” իմաստից (հմմտ. ՀԲԲ, ԱՀԲԲ, ԺՀԲԲ): Կազմված են բազմաթիվ կայուն կապակցություններ, դարձվածքներ: **Ընծայ(յ)**: Ծագում է հ.-ե. *eng’həti -ից՝ “նվեր, զոհ, պարգև”: ՀՄԲ-ում վերապահությանը բխեցվում է հ.-ե. *anu-(d)hiti բայանունից (վեդ. anu-dhā “նվիրել, ընծայել”): “Ընծեռայք. իրով ձեռամբ կամ ի ձեռանէ տուեալ տուրք, պատարագ. նուէր և կաշառ”⁸(ԵՀԲ): Ս.Գրքի 70 վկայություններից երկուսն են նորկտակարանյան: Գրաբարում *ընծայ - ծան - գապիկ-զեն -զոհ - յազ - յաշտ - պատարագ - ողջակէզ- սպանդ* բառերը հոմանիշներ էին. բոլորն էլ նշանակում էին Աստծուն ձուլված նվեր: Հետագայում *ընծայ* բառը ձեռք է բերում ավելի ընդհանուր իմաստ՝ “իր, առարկա ևն, որ ձրիաբար տրվում է մեկին..., նվեր”: Բառի “զոհ” իմաստը հնացած է: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում և ապատերմինացում **Թուլ(ել)**: Նախնական իմաստը՝ “կախարդել”: Ծագում է հնիւ. *tou- արմատից՝ “խոսել, կարդալ, արտասանել”: Ս.Գրքում վկայված է մեկ անգամ (Ժող. Ժ. 11): Գրաբարում *թովիչ* և *թովչութիւն* բառերը առնչվում էին կախարդությանը: Արդի հայերենում ունի նաև “հրապուրելով գրավել, զմայլել, տիրել (հոգին, միտքը)” իմաստները: Բառիմաստի փոփոխության տեսակետից կարող ենք նշել մասնակի շրջում, նաև՝ ապատերմինացում; **Կրան (կրօն)**: Ծագում է *կիր* (կրել) արմատից՝ -ոն մասնիկով: Է.Աղայանի կարծիքով՝ “Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *gʷer- gʷer- ”ծանր” արմատից”⁸: ՀԲԲ-ում *կրօն*-ն ունի 9 իմաստ (ԱՀԲԲ-ում՝ 3 իմաստ, բաղադրված 50 բառ, ԺՀԲԲ-ում՝ 2 իմաստ, բաղադրված 65 բառ): *Կրօնը*, որ գրաբարում ուներ “կարգ, կանոն, օրէնք, սովորութիւն, վարդապետութիւն, հաւատք” իմաստները, ժամանակի ընթացքում կորցրել է գրաբարյան իմաստներից մի քանիսը և հիմնականում ըմբռնվում է որպես մարդու հավատը դեպի Աստված և ձեռք. տեղի է ունեցել բառիմաստի նեղացում: Նոր են *կրօնադավանական, կրօնադավանություն, կրօնազերծ, կրօնավարություն, կրօնաքաղաքական* և այլն: **Հոգի**: Ծագում է հ.-ե. *rouio-ից՝ *reu- “փչել, շնչել”, ըստ Գ.Ջահուկյանի՝ հ.-ե. *rouio- (*pəu-, *pau-) “փչել, ուռչել” արմատից: Սկզբնական նշանակությամբ՝ “ոգի, շունչ, քամի, օդ”, նաև՝ “անձ, մարդ, շունչ, սիրտ” (ԵՀԲ): Կրօնական պատկերացումներով՝ մարդուն կենդանիներից տարբերող և Աստծու հետ կապող ոչ նյութական անմահ էություն մարդու մեջ: Քրիստոնեության մեջ՝ Սուրբ Երրորդության անձերից մեկը՝ *Սուրբ Հոգի*: Հետագայում բառը ձեռք է բերել նոր իմաստներ՝ *մարդու հոգեկան աշխարհ, բնավորություն, խիղճ, ոգևորություն*, փխբ. *որևէ բանի հիմնական էությունը, հա-*

⁷ Տե՛ս М.Шанский, В.В.Иванов, Т.В.Шанская, Краткий этимологический словарь русского языка, М., 1971, с. 112.

⁸ Տե՛ս Է. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 84-85:

կում, խառնվածք և այլն: Ս.Գրքում՝ 460 վկայություն: Բաղադրության մեջ է մտնում 2 ձևով՝ *հոգե-* (հոգի+ա) և *հոգի*: Միջինհայերենյան են՝ *հոգեվարել, հոգեպահ, հոգեփրկանք* և այլն: Հոգի-ն ԱՀԲԲ-ում ունի 18, ԺՀԼԲԲ-ում՝ 12 իմաստ, Լ.Հովհաննիսյանի ԳԲ-ում՝ 21, ՆԲ-ում՝ 47 նոր բառեր: Կան շատ դարձվածքներ:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում *հոգեհաց* բառը, որ վկայված չէ գրաբարի մեզ հայտնի բառարաններում, ՄՀԲ-ում. ՀԲԲ-ում՝ *հոգու հաց, որ ննջեցեալի տէրերը թաղումից հեպո տալիս են յուղարկատրներին և աղքատներին*: Աճառյանը համարում է նոր բառ: Հոգեհաց-ի արարողության համար կարելի է ենթադրելի համարել *գինեծօնութիւն*-ը: Բառը վկայված է Լ.Հովհաննիսյանի ԳԲ-ում՝ “...եթէ անմահ է հոգին, վասն զի իրովի ամենայն մարդ *գինեծանութիւնս* առնէ գնացելոցն և երդնուն նոքաք”⁹: Եղիշե Դուրյանը ռամկական է համարում “*գինի թափել*”-*(յանուն մեռելոյն)*” արտահայտությունը¹⁰: Համապատասխան գուգահեռներ գտնում ենք այլ ժողովուրդների թաղման ծիսակարգում: Հայերի՝ գերեզմանին գինի լցնելու արարողությունը պատմական ժամանակներից է հասել մինչև մեր օրերը¹¹: Հոգեհաց-ը շատ հոմանիշներ ունի՝ *հոգեճաշ, հոգու հաց, մեռելահաց, ողորմաճաշ, այգալաց, սգահաց* և այլն: Հոմանիշային շարքում *այգալաց*¹² բառի առկայությունը հուշում է, որ բառը, հետևաբար՝ հասկացությունը գոյություն է ունեցել քրիստոնեությունից առաջ: Հնարավոր է՝ հեթանոսական գաղափարախոսության հետ առնչվող ծիսական այս արարողությունը անվանվել է այլ բառերով, սակայն հասկացությունը պահպանվել է բարբառներում և, հավանաբար, բարբառներից է անցել գրական հայերենին: **Մաղթ**: *Մաղթել* բայի արմատն է: Ծագում է հնիս. **mlth-* արմատից: *Մաղթեմ*-ն ուներ “աղօթել, աղաչել, աղերսել, պաղատիլ, խնդրել, բարեխօսել” իմաստները: Ս.Գրքում ունի մեկ վկայություն (Իմս. 13. 18): Ավելի ուշ բառի առաջնային իմաստը դառնում է ընդհանրապես *մեկին որևէ բանի բարի ցանկություն հայտնել՝ բարեմաղթել*: Տեղի է ունեցել բառի ապատերմինացում, թեև պահպանվում է նաև կրոնական՝ “աղոթքով, աղոթելով խնդրել” իմաստը: **Մատաղ**: Հ.-ե. **mel* արմատից՝ “փշրել, մանրել, ջարդել, աղալ”, ըստ Գ. Զահուկյանի՝ հ.-ե. **mad* նախածնից՝ “թաց, խոնավ, հյութել” “Ռամկորէն՝ որպէս որթ *մափաղ* զենլի, և բաշխելի աղքատաց որպէս *ագապ*” (ՆՀԲ): ՀԲԲ-ում *ագապ* բառի երկրորդ իմաստը *մափաղ* է: Ս.Գրքի 8 վկայություններն էլ

⁹ Տե՛ս Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի (համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս.Արևշատյանի), Ե.1980, էջ 204:

¹⁰ Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանութիւն, Երուսաղէմ, 1933, էջ 113:

¹¹ Տե՛ս Խ. Սամուէլեան, “Հայ ընտանեկան պաշտամունքը”, Ազգագրական հանդէս, 1904, 12-րդ գիրք, էջ 203-234:

¹² *Այգալաց*-ը առնչություններ ունի *այգաողքք* բառի հետ, որ ժողովուրդն անվանում է *էզնահող, ինքնահող*: Տեղի է ունեցել *այ>է*, ապա է *>ի* հնչյունափոխություն:

հինկտակարանյան են: Արդի հայերենում բառի իմաստները միմյանցից հեռացել են, և առաջացել է համանունություն՝ *մարդաշ, փխբ.*՝ *թարմ, նոր*, մյուս իմաստը առնչվում է *զոհ* հասկացությանը (ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ): Ըստ Ալիշանի՝ Գ.Լուսավորիչը հեթանոսական զոհերի փոխարեն հաստատեց քրիստոնեական *ազապն ու մարտիր*: Հեթանոս հայերի՝ հեթանոսական աստվածներին մատուցվող զոհաբերությունը փոխարինվեց նոր զոհաբերությամբ՝ ձոնված Քրիստոսին: Ժողովրդին հոգեհարազատ *մարտիր* հաճախական է. բաղադրված են բազմաթիվ բառեր և դարձվածքներ: Հայերենի բոլոր բարբառներում ունի “*զոհ*” իմաստը: **Մեղ(ք)**: Հնխ. **mel-* արմատից՝ “սխալվել, խաբել”: ՆՀԲ-ում՝ “յանցանք, վնաս. գործ անիրաւ, վնասակար...”: ՀԲԲ-ում բառի առաջնային իմաստը կրոնական է՝ “Աստուածային օրէնքի դէմ գործված գործ, յանցանք՝ կրօնական տեսակէտից”: Ս.Գրքում՝ 718 վկայություն: Գրաբարում *բառի* հոմանիշներն էին *մեղանք, մեղանչանք*: Աշխարհաբարում, պահպանելով գրաբարյան իմաստները կրոնական առումով, բառը ձեռք է բերել “խղճահարություն առաջացնող բան, խղճալի, խիղճ” իմաստները՝ *մեղք է, մեղքը գալ*: “*Մեղայ Աստուծու*” արտահայտությունը՝ “մեղավոր եմ, մեղանչեցի”, ներում հայցելու արտահայտություն է: Միջինհայերենյան են *մեղացու* (մեղապարտ), *մեղանչանալ* (մեղանչել), *մեղկան* (մեղավոր) և այլն: Արդի հայերենում *մեղ-(մեղա)-*ով կազմված են իրավաբանական տերմիններ՝ *մեղադրյալ, մեղսագործ, մեղսակից, մեղսունակ* և այլն: Կան շատ դարձվածքներ: **Սուրբ**: Ծագում է հ.-ե. **kʰsbhro-* “մաքուր, անարատ, նուիրական, սուրբ”, ըստ Ջահուկյանի՝ **kʰsbro-* արմատից՝ “փայլուն, պայծառ, գեղեցիկ”. ՆՀԲ-ում՝ “մաքուր, անարատ, յստակ, նուիրական, աստուածային, սրբազան, վեհ” և այլն: Ս.Գրքում՝ 866 վկայություն: ԱՀԲԲ-ում՝ 15 իմաստ: Գործածվում է իբրև մակդիր ընդհանրական և հայ եկեղեցու սրբադասման մեջ, սրբավայրերի անվանումների հետ: Միջինհայերենյան են *սրբազնամաքուր, սրբահաճոյ, սրբապահք* (խիստ ծոմապահություն) և այլն: Աստվածաշնչի մյուս անվանումներն ունեն *սուրբ* կամ *սրբազան* մակդիրը՝ *Սուրբ գիրք, Սրբազան մատյան, Սրբազանագիրք*: Կան բազմաթիվ դարձվածքներ: **Տօն**: Ծագում է հ.-ե. **dapni-* “զոհ”, ըստ Ջահուկյանի՝ **dāp(ni)-*ից՝ “զոհախնջույք”: Սկզբնապես՝ “զոհաբերություն աստուածներին և հանդէս այդ առիթով” , ավելի ուշ՝ քրիստոնեության ժամանակ, “յիշատակ Քրիստոսի տնօրինութիւնների և սրբերի նահատակութեան” (ՀԲԲ): Հետագայում ձեռք է բերել ավելի ընդհանրական իմաստ՝ *հանդիսավոր օր, տոնակատարություն, փխբ.*՝ *ցնծություն, ուրախություն*: Տարածք է գործածվում է նաև ածականաբար՝ *տոն օր*: Ս.Գրքում՝ 165 վկայություն: Ըստ ավանդության՝ հայ եկեղեցու տոների հիմնադիրը Գ. Լուսավորիչն է: Արդի հայերենում *տոն* բառի հիմնական իմաստը կրոնական չէ՝ “որևէ նշանավոր իրադարձության՝ դեպքի ևն առթիվ կամ հիշատակին նվիրված հանդիսությունների օր”(ԱՀԲԲ): Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում կցորդության հիմունքով: **Քաւ**:-*Քաւել* բայի արմատն է. պայմանականորեն կարելի է

համարել կրոնական տերմին: Ծագում է հնխ. *kau- “զգուշանալ” արմատից՝ “մեղքի թողութիւն, արդարացում, ներում, սրբացում”: Արդի հայերենում կրոնական է բառի երկրորդ իմաստը՝ *Ճզնակեցությանը՝ մեղա գալով կամ որևէ այլ միջոցով մեղքերից թողություն ստանալ* (ԱՀԲԲ): Ս.Գրքում՝ 62 վկայություն: “Քավության նոխազ” արտահայտությունը գործածվում է ուրիշի գործած հանցանքի համար պատասխանատվություն կրող անմեղ մարդու համար:

Աշխատանքում հ.-ե. ծագման կրոնակեղեցական բառերի քանակի ու իմաստների և բառակազմական փոփոխությունների քանակը ներկայացված է աղյուսակներով: Համեմատվել են ԱԲ-ի, ՀԲԲ-ի և ԱՀԲԲ-ի տվյալները: Հ.-ե ծագման արմատները բառակազմորեն արդյունավետ են՝ *կրոն*-ով կազմվել են 30, *հոգի*-ով՝ 80, *սուրբ*-ով՝ 20, *տոն*-ով՝ 26 նոր բառեր :

Առաջին գլխի երկրորդ ենթազույգը՝ “Փոխառությունները կրոնակեղեցական տերմինահամակարգում”, բաղկացած է 4 մասից: Եզակի վկայությամբ փոխառությունների համար օրինակները կամ բնագրային են, կամ բերված են ՆՀԲ-ից:

1.2.1. մասում (*Ասորական փոխառություններ*) դիտարկել ենք քրիստոնեության քարոզչության շրջանում (2-5-րդ դդ.) կատարված փոխառությունները, որոնք ասորական փոխառությունների ընդհանուր թվի (ըստ Աճառյանի՝ 211 բառ) մոտ 12 տոկոսն են կազմում¹³: Առանձնացրել ենք իմաստափոխված բառերը, հնաբանությունները և սխալ ընթերցմամբ առաջացած բառերը:

ա) Իմաստափոխված բառեր: Առնակ (ասոր. *harnāgā*՝ “շնագայլ”): ՆՀԲ-ում և ԱԲ-ում վկայված չէ: ՀԲԲ-ում՝ “երևակայական ոգի կամ չար դև, որ հոգիներն առնում է՝ գրող, կրող”: Գ.Ջահուկյանի կարծիքով՝ “թերևս բնիկ հայկական կազմություն՝ *առնել* բայից (ՀՍԲ): Ե. Լալայանը գրում է, որ Վանում մայրերն իրենց չար երեխաներին “առնակայ շուն”, “առնակային երեխայ” էին անվանում, որ մնացորդ է մեր նախնիների *Առնակ* հոգեառ չար ոգու: Կարևոր բարբառում կա անեծք՝ “Երեսդ առնակավոր շները լիզեն”, այսինքն՝ *մեռնես*: Հավանական է *առնել* բայի անկատարի հիմք + *ակ* վերջածանցով կազմված կառույցը, այսինքն՝ առնող-տանող (չար ոգի). նշում է Ղ.Ալիշանը: Գուցե մեր նախնիների պատկերացումներով՝ *առնակ*-չար ոգին ուներ շան կերպարանք: Հնարավոր է՝ բառը բաղարկության հետևանք է: **Դերի** (ասոր. *dairā*՝ “վանք”): Բարբառներում բառը որոշակի իմաստային փոփոխության է ենթարկվել, սակայն պահել է կապը առաջնային իմաստի հետ՝ “խաղերով ու պարերով ուխտագնացություն դեպի վանք”, “գյուղական տոնախմբություն” (ՀԲԲ): ՆՀԲ-ում *Դերանիկ* ձևով է:

¹³ Աբեղայ և քահանայ բառերը քննվել են “Հայ եկեղեցու նվիրապետությանը վերաբերող տերմինների մասին”, *մամոնայ* և *սափան(ա/յ)* բառերը՝ “Չարը խորհրդանշող սուրբգրային մի քանի անվանումների շուրջ” ենթազույգվաներում:

Բաբառներում *դերի* են անվանում սրբավայրի տոնը: **Ծոմ** (ասոր. *sōm(sōmā)*) “օրական մէկ անգամ միայն ուտելով պահք”: Ս. Գրքում թարգմանված է *պահք*: Ներկայումս գրեթե նույնացված *պահք* և *ծոմ* բառերը նախկինում տարբեր էին: *Ծոմ* ուներ օրական մէկ անգամ ուտելով պաս պահել, իսկ *պահք*-ը՝ ընդհանրապես կերակուր չուտել: Գրաբարյան *պահք* բառի հայցական հոլովը *պահս* է, որից *պաս*: Այժմ հավասարապես գործածում են և՛ *պահք*, և՛ *պաս* բառերը: **Հեթանոս** (ասոր. *htnos (het(a)nos)* “օտարազգի” < հուն. *έθνος*՝ ”ժողովուրդ, ցեղ”): Ըստ ԲՍԳ-ի՝ հրեաները այդպես անվանում էին մովսիսական օրենքը չընդունածներին: Ավելի ուշ հայերը *հեթանոս* են անվանում ոչ քրիստոնյաներին. փխբ.՝ “բարբարոս, անօրեն”: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: **Քարոզ** (ասոր. *kārōzā*՝ ”մունետիկ, սուրհանդակ”) “բարձր ձայնով հրատարակող Աստուծոյ կամ տէրութեան հրամանը, մունետիկ, քարոզիչ”, “սարկաւագի խօսքերը, բեմբասացութիւն, քարոզութիւն, ճառ, խրատ” (ԱԲ): Ս. Գրքում *քարոզ*-ն ունի 23, *քարոզել*-ը՝ 83, *քարոզութիւն*-ը՝ 12 վկայություն: Գրաբարում բառն առաջնային իմաստով անձ է՝ “...քարոզն աղաղակէր...” (Եսթ. 2.11): Արդի հայերենում՝ “քահանայի կամ բարձրաստիճանի հոգևորականի բեմասացությունը եկեղեցում, խրատ, պատվեր, խրատելը”: Վաղքրիստոնեական շրջանում *քարոզ* ասելով հասկացել են նաև քրիստոնյաներին հղված թղթերը, ավելի ուշ՝ ճառերը: Սկզբնապես *քարոզելը* և *ավետարանելը* նույնացվել են, ավելի ուշ իմաստային տարբերակման են ենթարկվել. *ավետարանել*-ն ունի “ավետարանը քարոզել”, *քարոզել*-ը փոխել է իր գործառական նշանակությունը՝ ձեռք բերելով նաև *բանավոր կամ գրավոր որևէ գաղափար փարածել* իմաստը: Կցորդության հիմունքով տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: **Քուրմ** (ասոր. *kūmrā*՝ “քահանա”): Ըստ ՆՀԲ-ի՝ *չքահանայ՝ պաշտօնեայ կոոց*: Արդի հայերենում՝ նաև փխբ. *արվեստի բնագավառում հարգված արվեստագետ, որևէ բանի անձնուրացորեն նվիրված անձ*: Գործածական է բանաստեղծական մասնաշերտում: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում:

բ) Հնաբանություններ են՝ Ադեն (ադին) (ասոր. *’əden < եբր. ’ēden՝ դրախտ, եդեն*): Բառն աշխարհաբարյան փուլում չի գործածվում. գրաբարում էլ նրա գործածությունը հաճախական չէ: **Բուտ** (ասոր. *bud՝ եկեղեցական վերադետույ*): ԱԲ-ում *բուտ*-ի բացատրությունը հղվում է *պերեպուտ*-ին՝ “տեսուչ, եպիսկոպոսէն ու քորեպիսկոպոսէն ետև”: Համարվում է *պերեպուտ*-ի համառոտությունը. վկայված է Մ. Գոշի “Դատաստանագրքում”: **Խարաման/ի/**: Ասոր. *xarmānā*՝ “ղև, սատանա, չար օձ”: ՆՀԲ-ն և ՀԱԲ-ն առնչում են իրանական Աիրիմանի անվանը. ԱԲ-ում՝ “չար հրեշտակ, դև, չար օձ”: Բառը գործածել է Եղիշեն՝ “...ի դիւաց խարամանույ խաբեալ...”: Ե. Տեր-Մինասյանը *Հարամանի, Խարամանի* կամ *Հարաման, Խարաման* համարում է նույնը, ինչ *Աիրիմանի*՝ չարության աստծու անունը՝ ենթադրելով, որ *Խարամանի* ձևը ստացվել է՝ զուգակցվելով ասորերեն *խարմանա*՝ “օձ” բառին: **Մարանաթայ**: Նգովքի բանածն է՝ մեկ անգամ գործածված Նոր կտակարանում՝

“Եթէ ոչ ոք սիրէ զտէր Յիսուս, եղիցի նզովեալ. *մարանաթայ*” (Ա Կրնթ. ԺԶ. 22): Ասորերեն *mār-an atā* արտահայտությունը Աստվածաշնչի թարգմանության ժամանակ հունարենից գրադարձվել է հայերեն՝ “*մարանաթայ*, այսինքն տէր գայ, մի անյոյս լինիք, և ըստ արժանեացն հատուցանէ” (ՆՀԲ): **Մծղնեայ** (ասոր. *məṣalləyāne*՝ “մեսաղեան”)։ “աղթական” կոչված քրիստոնեական աղանդ էր: Փխբ. “պիղծ, զագիր, զգվելի”։ *Մծղնեությունը* ծագել է Ասորիքում 4-5-րդ դդ.: Հայաստանում ընդգրկել է նաև հոգևորականների շրջանակը: *Մծղնեները* արհամարհում և մերժում էին եկեղեցական խորհուրդները, ամուսնությունը: Հակաբարոյական արարքների համար բառը ստացել է “պիղծ” իմաստը՝ կորցնելով իր սկզբնական “աղոթող” իմաստը: Տվյալ դեպքում, թերևս, կարող ենք դիտել բառիմաստի շրջում: **Նածրացի** (ասոր. *nasrāyā*՝ “քրիստոնյա”, *-gh*-ն հայերեն վերջածանց է) (ՀԱԲ): ՆՀԲ-ն բառի բացատրությունը հղում է “նազարացի” և “նազովրեցի” բառերին, *վերջինիս* բացատրությունն էլ՝ *ուխտատոր*-ին: Վերջինս մեկնվում է. “Ուխտադիր. որպես նազովրեցի”։ Բառը Նոր կտակարանում է. “...Յիսուս *Նազովրեցի*, Թագաւոր հրէից” (Յովհ.ԺԹ.19): Սխալմամբ առնչում են *Նազարեթ* տեղանվանը (հմմտ. Մալխասյանցը *նազովրեցի*-ն բացատրում է. “(Նազարեթ քաղաքի անունից) Նազարեթի քաղաքացի. յատուկ մակդիր Քրիստոսի...” (ՀԲԲ): Կ. Դալլաքյանն իրավացիորեն գտնում է, որ *նազովր(եցի)* բառը համապատասխանում է հունարեն *նազարայոս* բառին և նշանակում “նվիրաբերված Աստծուն” (տե՛ս Նազովրեցի և հարակից հարցեր, ՊԲՀ, 2007, թիվ 3, էջ 186-191): Ժամանակի ընթացքում, հավանաբար արտասանական նմանության հետևանքով, *նազովր(եցի)* և *նազարեթցի* բառերի իմաստները նույնացվել են: Աստվածաշնչի հայ թարգմանիչները ճիշտ են թարգմանել բառը՝ նկատի ունենալով *ուխտատոր* բառի “*ուխտադիր, ընծայաբեր*” իմաստները: Այսինքն՝ Պիղատոսի մեղադրանքի մեջ կարևորվում է Քրիստոսի՝ Աստծուն ընծայաբերված լինելը: **Շուշփայ** (ասոր. *šūšepā*՝ *գլխի ծածկոց, քող*): Հետագայում՝ *սկիհը մաքրելու շոր, սրբոց, մատունքների պատանք*: Միջ.հայ.՝ *շուշփէ* տարբերակով՝ “սրբերի մատունքներ, խաչ կամ ավետարան փաթաթելու շոր”։ Ունի սահմանափակ գործածություն: **Սիւնհոդոս** (ասոր. *sunhodos*՝ “եկեղեցական մեծ ժողով” < հուն. *σύννοδος*): ՀՀԲ-ն և ՆՀԲ-ն բառը համարում են հունական, Աճառյանը՝ ասորական փոխառություն՝ *h* հազագի պատճառով: Հայ մատենագրության մեջ բառի առաջին վկայությունը Բուզանդինն է, որը, թերևս, օգտվել է ասորական բնագրից: Փոխառությամբ անցել է շատ լեզուների *սինոդ* ձևով: Մի շարք ուղղափառ և բողոքական եկեղեցիներում բարձրաստիճան հոգևորականների ժողով է: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո ստեղծվել է Սուրբ Էջմիածնի սինոդ (1836թ.), գոյատևել մինչև 1917թ (ԲՀ): Հնարավոր է՝ այս ընթացքում բառը երկրորդ անգամ է փոխառվել, այս անգամ՝ ռուսերենից: **Քաղդեայ** (ասոր. *xaldāyā*՝ *հմայող, գուշակ, աստղահմայ մոգ*): Բառը քաղդեացիների ինքնանվանումից է. նրանք հայտնի էին աստղագուշակությամբ: Բառի հիմնական իմաստը՝ “քաղդեա-

ցի” է՝ բարելացի, ավելի ուշ, բառիմաստի նեղացման հետ կապված, ձեռք է բերել “աստղահմա” իմաստը:

գ) Սխալ ընթերցմամբ առաջացած բառեր: Առեսարոն՝ “Տառիանոսի չորս ավետարանները”՝Տառիանոս Ասորու (2-րդ դ.) կազմած առաջին համաբարբառն է: Հունալատինական աղբյուրներում տրվում է diatessaron անվանումը: Բուն ասորական անվանումն է *evangelion da- mēhallētū*¹⁴, “միախառնվածների (խառն բնագրերի) ավետարան”: Այն մեզ չի հասել: Տառիանոսի կազմած այդ ավետարանի մեկնությունը գրել է Եփրեմ Խուրի Ասորին, որ 5-րդ դ. թարգմանվել է հայերեն և կրել “Մեկնութիւն Աւետարանի համաբարբառ, զոր արարեալ է Եփրեմի Խուրին Ասորոյ” (տե՛ս Ս.Եփրեմի Մատենագրութիւնք, հ. Բ, Վենետիկ, 1836): Աճառյանը նշում է, որ բառը գտել և մեկնել է Ա.Վարդանյանը: Հ.Աճառյանի կարծիքով՝ հայ թարգմանիչը ասորերեն բառի բառասկզբի *d-*ն համարել է սեռականի մասնիկ և հանել այն: Բառը սխալ ընթերցման հետևանք է. ճիշտ ձևը *դիապրեսարոն* է: **Իբրամէն** (ասոր. *dibre-yōmīn* < եբր. *dibre-hayāmim*): Այդպես անվանում է Եփրեմ Ասորին “Մնացորդաց գիրքը”: *Իբրամէն* բառի մասին որոշ տեղեկություններ է տալիս Ա.Վարդանյանը (Ձեռագրական համեմատութիւն եւ քննութիւն Յեսուայ, Դատաւորաց, Թագաւորութեանց եւ Մնացորդաց Եփրեմեան հայ մեկնութիւններու, ՀԱ, 1912, 1-12, էջ 546): Նա “Դիբրէեսովմին” (*verba aut res gestae dierum*) բառը ուղղում և դարձնում է *իբրամէնու*՝ “վարումն ամուրց”: *Իբրամէն*-ը “Գիրք մնացորդաց”-ի աղավաղված գրադարձությունն է:

1.2.2. մասում (Եբրայական կրոնական բառեր) քննել ենք եբրայական կրոնական բնույթի բառերը: Ինչպես հայտնի է, եբրայերենը ուղղակի ազդեցություն չի ունեցել հայերենի վրա: Հունարենի միջնորդությամբ եբրայերենից հայերենին անցած բառերը կարելի է համարել “օտար” բառեր: Ս.Գրքի և եբրայական գրականության թարգմանության միջոցով հայերենին անցած 138 բառերից կրոնանկեղեցական բառաշերտին է պատկանում դրանց մոտավորապես 19 տոկոսը: Որոշ բառեր՝ *ալէլույիա*, *ամէն*, *ովսաննա* (*օվսաննա*), տերմին-բանաձևեր են՝ ընդհանուր բոլոր քրիստոնյաների համար: Եզակի վկայություն ունեն՝ *ազազայէլ*, *ամոն*, *բամա*, *նեսար*, *քովմարիմ*, 2) նվազ հաճախական են՝ *բէեղզերուդ*, *բելիար*, *էլ*, *թերափիմ*, *թուրէ*, *կորբան*, *պասքա*, *սէրսէրիմ*, 3) “Աստված” իմաստն արտահայտող *Ադոնա*, *Ահիահ*, *Ելովա*, *Յահ* (եզակի վկայությամբ), *Սադա* (*Սադայի*) բառերը հինկտակարանյան են:

Ազազայէլ (*ազազէլ*), *բելիար*, *բէեղզերուդ* բառերը քննվել են “Չարը խորհրդանշող սուրբգրային մի քանի անվանումների շուրջ” ենթագլխում:

¹⁴ Տե՛ս Հ.Ս.Անայան, “Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը”, “Էջմիածին”, 1971, թիվ 11, էջ 49-64, նաև Պ. Էսապպեան, Հայերեն անտարաններու սկզբնագրի հարցը և Ազաթանգեղոսի ու Ղազար Փարպեցոյ կոչումները, “Հանդէս ամսօրեայ”, 1935, 1-12, էջ 571-596:

ա) Հաճախական բառեր: Ալելու/իա/ (աղէդու) (եբր. halelu Ya'h' "գովեցէք, փառաբանեցէք զԱստուած" արտահայտությունից)՝ *ալէլուիա երգն, նուազ փառաբանութեան, օրհնութիւն աստուծոյ* (ՆՀԲ): Քրիստոնեական եկեղեցիներում *ալէլու-իա*-ն գովաբանական խոսք է, որ կատարվում է ժամերգության ժամանակ: **Ամէն** (եբր. amēn' "ստույգ, ճշմարիտ, իրավամբ, եղիցի")՝ *ի վերջն բանից՝ այո՛, այդպէս է, և այդպէս եղիցի, ի սկիզբն բանից՝ սրոյգ, սրուգութեամբ, արդարև, ճշմարտապէս* (ՆՀԲ): Բառը տարարժեք էր. գրաբարում գործածվել է նաև որպես գոյական "ճշմարտություն" իմաստով՝ "Այսպէս ասէ *ամէնն*" (Յայտ. Գ. 14): *Ամէն* բառը, նախադասության վերջում դրվելով, նշանակում էր "այո՛, այդպես է և թող այդպես լինի": Ս.Գրքում հաճախական է "ամէն ասեմ" կամ "ամէն, ամէն ասեմ" արտահայտությունը՝ գործածված ավետարանում 78 անգամ "ճշմարիտ" իմաստով, 41 անգամ՝ "եղիցի" իմաստով, որից 4-ը՝ Հին կտակարանում: *Ամէն* բառը հայերենում, բացի աղոթքների վերջում իբրև հաստատումն ասվածի, ունի նաև այլ իմաստներ՝ "հին գրքերի վերջում՝ որևէ փառաբանական խոսքից հետո՝ իբրև հաստատություն կամ կնիք ասվածի և իբրև նշան գրվածքի ավարտման", նաև բարեմադթության կամ հավանության իմաստ՝ "Չարը խափանի, բարին հաղթանակի: *Ամէն*" (ՀԲԲ): **Գեհեն** (եբր. gēihinnon): Եբրայերենում կոչվում էր "Հիննոմի ձոր", որ Երուսաղեմի մոտ վայր էր, որտեղ հրեաները մարդագորհ հաստատեցին (ՔՀ): Յովսիա թագավորը կործանեց այն և քաղաքի աղտեղությունները այնտեղ տարավ: Հետագայում բառիմաստի ընդլայնումով այդ տեղը ստացավ "դժոխք" իմաստը՝ "Վիհ ենոմայ կամ ձոր տրտմութեան..." (ՆՀԲ): **Դաբիր** (եբր. dābir' "սրբութիւն սրբոցի ներսի սենեակը")՝ *հրեական փաճարի հեփնասենյակ*: Ս.Գրքի 15 վկայություններն էլ հինկտակարանյան են: Արդի հայերենում ձեռք է բերել է փխբ. իմաստ՝ *սրբավայր, սուրբ խորան*: Գործածվում է բանաստեղծական խոսքում: **Եդեմ** (<հուն. 'Εδαι < եբր. 'ēden' "դրախտ")՝ *անուն ասիական գաւառի, յորում էր դրախտը* (ըստ ԲՍԳ-ի): Արդի հայերենում գործածվում է բանաստեղծական մասնաշերտում: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում նմանության հիմունքով, նաև՝ ապատերմինացում: **Մեսիա(յ)** (<հուն. 'Μεσσίας "օծեալ" <եբր. Māšīa' օծեալ): *Մեսիան*, ըստ հին հրեաների, փրկիչն է, որ գալու է մարդկությանը փրկելու: Հույները *օժյալ* (հուն. Քրիստոս նշանակում է *օժյալ*) համարում են Քրիստոսին: ԱՀԲԲ-ում՝ նաև *Քրիստոսի մականունը*: **Ովսաննայ** (< հուն. ὠσαννά < եբր. hōšī'anā' "ագատի՛ր, օզնի՛ր")՝ "Ձայն օրհնառաք առ եբրայեցիս" վասն եկելոյ հասելոյ փրկութեան և փրկչի" (ՆՀԲ): "... աղաղակէին և ասէին, *Ովսաննա* Բարձրելոյն, օրհնեալ, որ գաս յանուն Տեառն" (Մրկ. ԺԱ. 9): Խոսքը Քրիստոսի՝ վերջին անգամ Երուսաղեմ մտնելուն է վերաբերում, որին հին հրեաները ցնծության բացականչություններով դիմավորեցին: Հետագայում *ովսաննա* ընդհանրապես սկսեց նշանակել *ցնծության, գոհության աղաղակ*: Արդի հայերենում՝ "Շաղկազարդի տոնին երգվող օրհներգ", փխբ.՝ "փառաբանություն, օրհներգ, գովերգ": Բառիմաստի նեղացմամբ՝ իգական անձնանուն:

Ռաբբի (ռաբի), Ռաբբունի (րաբունի, րաբուն) (եբր. rabbi՝ «վարդապետ, Տե՛ր», rabbōni, ribbōni՝ «Տէ՛ր իմ»)՝ «տե՛ր իմ, վարդապետ իմ», ուսուցիչ՝ (ՀԱԲ): Հանդիպում է ավետարանների թարգմանության մեջ՝ «... եւ ասէ ցնա եբրայեցերէն *Րաբբունի*, որ թարգմանի Վարդապետ» (Յհ. Ի.16): *Րաբունապետ*-ը գործածվում է որպես գիտնական հոգևորականի հարգական անվանադիր՝ *ուսուցչապետ, նշանավոր վարդապետ*:

1.2.3. մասում դիտարկել ենք *հունական կրոնակեղեցական փոխառությունները*: Հունարենից հայերենին անցած փոխառությունների մեջ (ըստ Աճառյանի՝ 918 բառ) կրոնակեղեցական բառաշերտին պատկանում է 89 բառ: Եկեղեցական պաշտոննությանը վերաբերող բառերին անդրադարձել ենք «Հայ եկեղեցու նվիրապետությանը վերաբերող տերմինների մասին» ենթագլխում:

Հունարենի ազդեցությունը հայերենի վրա հատկապես նկատելի է դառնում Աստվածաշնչի և կրոնադավանաբանական գործերի թարգմանության ընթացքում: Հունարեն փոխառություններից 1) եզակի վկայություններ են *ապոստոլոս, արիէ, դեսպուպ, էնկոմիա, իկոն, հեննեպիկոն, մարպիրողոզ, քրիայ* և այլն, 2) մի մասը վկայված է ուշ շրջանից (սովորաբար ոչ հաճախական կիրառությամբ), ինչպես՝ *դիաթիկ, կաթարոս, հեննեպիկոն, պենտեկոստէ, պոստէթէոս, սոֆիա ոռթի, փիփիկոն, օրթի* և այլն, 3) մի մասն իմաստափոխվել է՝ *ագապ(ե), բեմ, բորբորիանոս, եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկէ, կանոն, մարպիրոս, միտոն, սկետոն* և այլն, 4. նախագրային շրջանից են՝ *բեմ, եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկէ, կանոն, մարպիրոս, պենտեկոստէ, սաղմոս* և այլն:

Իմաստափոխված բառեր: Ագապ/ե/՝ ἀγάπη՝ «1.Սեր: 2.Եղբայրական հացկերույթ վաղ շրջանի քրիստոնյաների մոտ»՝ «Սէր. սիրելու. որպէս հացկերոյթ. կերակուր արարեալ ի սիրոյ և միաբան սիրով՝ մանաւանդ ի պէտս ողորմութեան աղքատաց, և յօժանդակութեան հոգոց ննջեցելոց» (ՆՀԲ): ՀԲԲ-ում՝ նաև «մատաղ»: Հետագայում *ագապ(ե)* բառի իմաստը փոխվում է: Այդպես են կոչվել նաև նվեր բերված կենդանիները: Ագապ(ե)-ին զուգահեռ հայերենում գործածվել է հ.-ե. ծագման *մատաղ*-ը: Ագապ-ով կազմված են *ագապապէր* և *ագապապուն* բառերը: Բառը իմաստի նեղացումով դարձել է իզական անծնանուն: Ագապ(ե) բառը ժողովուրդը չի գործածում, բայց նրա հետքերը պահպանվել են, ինչպես Ջատիկի և Ա.խաչի մեռելոցներին հասարակաց ճաշեր կազմակերպելը: **Բեմ**՝ βήμα բեմ: Գրաբարում բազմիմաստ էր՝ *արեան, աթոռ դատարարական, ամպիոն, բարձր տեղ, նստարան*(ԱԲ): Աշխարհաբարում բեմ-ի առաջնային իմաստը առնչվում է թատրոնին: Այդ անցումը, թերևս, կատարվել է հետևյալ կերպ. միջին դարերում Եվրոպայում հայտնի էր կրոնական ներկայացման մի ժանր՝ հայտնի *պատարագային (իթորգիական) դրամա* անվանումով: Դրանք, Հայաստանում հավանաբար, կատարվել են եկեղեցու բեմի վրա (Ծննդյան, Չատկական, Ոտնալվա): Հնարավոր է՝ առնչվում էր հեթանոսական *կացուրդին*: Գործառության

գուգորդությամբ տեղի է ունեցել բառիմաստի փոփոխություն: **Բորբորիանոս**[՝] βορβοριανοί՝ բորբորիպոն աղանդաւորներ. քրիստոնէական աղանդ էր: Հուն.՝ կեղտ, անմաքրություն, հայ.՝ պիղծ, վավաշ, ցանկասեր: Աղանդի ներկայացուցիչներն աչքի են ընկել անբարո վարքով, ունեցել պարականոն գրքեր: Հայտնի է, որ հայոց կաթողիկոսը նրանց վտարել է Հայաստանից: **Եկեղեցի**[՝] ἐκκλησια, որը և՛ հունարենում, և՛ հայերենում բազմիմաստ է՝ ընդհանուր ժողով, հավատացյալների հավաք, ժողովարան և այլն: Ս.Գրքում՝ 189 վկայություն: Բաղադրություններ՝ ՀԲԲ-ում՝ 30, ԱՀԲԲ-ում՝ 16 բառ: Բաղադրված բառերը ամենաշատը ՀԲԲ-ում են: Կազմում է բազմանդամ հոմանիշային շարք՝ աղոթարեղ- աղոթքի փուն- Աստուծո փուն- կաթողիկե- մայրու- նահատակ- վկայարան- վկայանոց - փուն վկայության- վանք- ժամ- ժամապուն- խաչդուռ (ՀԼՀԲ): Որոշ բարբառներում “եկեղեցի” իմաստով գործածում են ժամ, խաչ բառերը: Բառը լրիվ արմատացել է հայերենում: **Կանոն**[՝] κανών. հին հունարենում ուներ տասը իմաստ (ՃԴՄԸ): Բառի առաջնային իմաստը “եղեգնի ցողուն” է, որից էլ ածանցյալ են մյուս իմաստները՝ ձող, քանոն, սահմանագիծ, օրենք, կրոնական օրենք և այլն: Բառի իմաստներից մեկը՝ եկեղեցական օրենք, կրոնական բնույթի է: Հայերենում իմաստային փոփոխություն է ունեցել: ՆՀԲ-ում արձանագրված 13 բառին ԱՀԲԲ-ում ավելացել է ևս 15 բառ, որ միանշանակ ցույց է տալիս, որ բառն արմատացել է հայերենում. բաղադրված շատ բառեր անցել են համագործածական բառաշերտի: **Կաթողիկե**[՝] Καθολικη՝ “ընդհանրական”՝ սեպհականեալ մակդիր ընդհանուր եկեղեցոյ Քրիստոսի (ՆՀԲ), արդի հայերենում՝ քրիստոնէական ընդհանուր եկեղեցու անունը, եկեղեցու հայրապետի նստավայրը, մայր եկեղեցի” (ԱՀԲԲ): **Կոնդակ**[՝] κοντάκιον, բառացի՝ “գլանածև ուլորված թուղթ”, հայ.՝ մագաղաթեայ թուղթ, գիր հայրապետական, գիր յիշատակաց, կտակ. գալարեալ գլանածև(ՆՀԲ): ՀԲԲ-ում ունի 5 իմաստ՝ հիմնականում կրոնական բնույթի: Կազմված են կոնդակագիր և կոնդակագիրք բառերը: Մի քանի բարբառներում՝ կոնդակի՝ խանձարուր, կոնդիխել՝ բարուրել: **Մարտիրոս**[՝] μαρτυρος՝ վկա, ապացույց, ճգնավոր, նահատակ”: ՆՀԲ-ում՝ Սեպհականեալ անուն սրբոց՝ որք հեղին արիւնս ի վկայութիւն ճշմարտութեան: Հետագայում ձեռք է բերել նոր՝ “իր գաղափարների համար տանջանքներ կրող”, “շատ չարչարանքներ կրող, կրած” իմաստները. կցորդության հիմունքով բառն ունեցել է իմաստի ընդլայնում. բառիմաստի նեղացումով դարձել է հատուկ անուն: Կան բազմաթիվ տեղանուններ և սրբավայրեր: **Միռոն (միռոն, մեռոն)**[՝] μύρον՝ անուշահոտ բուսական յուղ: Ս.Գրքում թարգմանված է յուղ՝ “... Եւ հոտ հիւղոց քոց քան գամենայն խունկս ...” (Երզ, 1.2. 3): Թուրքախոս հայերը գործածում են “մեռոնսուզ” բառը՝ “անմեռոն, մահմեդական” իմաստով՝ կազմված թուրքերեն suz բացասական մասնիկով (ՀԱԲ): Ժողովուրդը մեռոնը սուրբ է համարել՝ մեռոնը վկա, երեսին մեռոն չկա և այլն: **Սկեռնի**[՝] σκευάριον՝ “կահույք, իր”: Բառիմաստի նեղացմամբ հունարենում ստացել է

“արկղ”, հայերենում՝ “խաչը պարունակող արկղ” իմաստը (<ԱԲ): Արկղում պահվել են սրբերի նշխարներ:

1.2.4 մասում քննվում են իրանական լեզուներից փոխառյալ կրոնական բնույթի բառերը: Ինչպես հայտնի է, հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից (1400-ից ավելի), հիմնական մասը՝ մ.թ.ա. 4-3-ից-8-10-րդ դդ.: Կրոնական բնույթի բառերը (մոտ 3,5 տոկոս) բաժանվում են 2 խմբի՝ ա) ընդհանրապես կրոնին և բ) իրանական հնագույն կրոնին (գրադաշտականությանը) վերաբերող բառեր: Կրոնանկեղեցական փոխառությունները հիմնականում միջին պարսկերենից են:

Նկատի ունենալով իրանական փոխառությունների իմաստային փոփոխությունները՝ առանձնացրել ենք հետևյալ բառախմբերը:

1) Իմաստափոխված բառեր: Ատրուշան (բառի առաջին մասը՝ *ատր* (*ātur*) միջ. պրսկ.՝ *կրակ*)՝ *տուն կամ մեհեան կրակի կրակապաշտից, կրակապուն* (ՆՀԲ): Արդի հայերենում ձեռք է բերել նոր, փխբ. գործածություն՝ *անմար կրակ, ոգևորություն: Բախպ:* Միջ.պրսկ. *baxt՝ բարեբախտություն, ճակատագիր: Բախպը* համարվել է վերուստ տրված բաժին՝ “Դիպուած բարի կամ չար. մանաւանդ բարին, որ և յաջողութիւնն ասի” (ՆՀԲ): Նախագրային շրջանից է: Ս. Գրքի երկու վկայություններն էլ հինկտակարանյան են: Զրվան-բախտ առնչությանը անդրադարձել է Եզնիկը՝ հերքելով Զրվանի գոյությունը, որն իրանական դիցաբանության մեջ ժամանակի և ճակատագրի աստվածն էր: Մի քանի բարբառներում ունի *ամուսին* իմաստը՝ “Բախտս լավ մարդ է”. տվյալ դեպքում՝ բառիմաստի նեղացում: Արդի հայերենում ձեռք է բերել նոր իմաստներ՝ ՀԲԲ-ում՝ 5, ԱՀԲԲ-ում՝ 6 իմաստ և բաղադրված 32 բառ: Բառի առաջնային իմաստն է *կյանքի հանգամանքներով պայմանավորված վիճակ, ճակատագիր*, մյուս իմաստները՝ *հաջողություն, դիպված* և այլն, ածանցյալ են առաջինից: Կազմված են բազմաթիվ դարձվածքներ: **Գուշակ:** Միջ.պրսկ. *gōšak*, հին պրսկ. *ni-gōšāg*՝ լոտես, գաղտնի ոստիկան”: Վրացերենը նույնպես փոխառել է բառը: Ե՛վ հայերեն, և՛ վրացերեն բառերի հիմքը ավեստ. *gōš* “լսել, ականջ դնել” բայն է (<ԱԲ): Գրաբարում՝ “1.ապագան գուշակող, 2.մատնիչ, 3.յուշարար, ազդարար” (ՆՀԲ): Հավանաբար, գործածվել է նախաքրիստոնեական շրջանից: Արդի հայերենում բառի գրաբարյան իմաստներից երկուսը՝ *մատնիչ* և *ազդարար*, դուրս են եկել գործածությունից. ունի “կանխասաց” իմաստը, փխբ.՝ “*նախանշան*”: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում կցորդության հիմունքով: **Դե:** Միջ. պրսկ. *dēv*՝ “հոգի, բարի ոգի, հրեշտակ և չար ոգի, սատանայ”: Հանդես է գալիս 2 ձևով՝ *դիվա-* և *դևա-*: ՀԲԲ-ում *դիվա*-ով բաղադրված են 95 բառ: *Դևա*-ով են *դևապաշտ, դևերես, դևություն* բառերը: Ս.Գրքի 81 վկայություններից 17-ը հինկտակարանյան են: Գրաբարում՝ “1.ոգի չար, չար հրեշտակ. հոգեղէն արարածք ապստամբեալք յԱստուծոյ՝ ընդ գլխաւորի իւրեանց, որ կոչի սատանայ, բանսարկու, 2. ոգի, հոգի”: Օր.՝ “Զդևս չար ասացեր. գոն և *դևք* բարի, զոր և դուք և մեք հրեշտակս անուանեմք”

(Եղիշէ): Մեր մատենագրության մեջ վկայված է *չարադև* բառը. “Իբրև *զՉարադև* մի ոչ դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնոյ” (Եղիշէ): Հետագայում *դև* -ի “բարի ոգի” իմաստը չի գիտակցվում: Ձեռք է բերել նոր իմաստներ՝ “1. հեթանոսական աստված, կուռք, 2. հեքիաթներում՝ զարմանահրաշ արարածներ, 3. փխբ. տգեղ, այլանդակ” և այլն: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում նմանության և կցորդության հիմունքներով: **Դժոխք**: Հիմնականում անեզական է: (Եզակի թվով մեկ օրինակ ունի ՆՀԲ-ն): Կազմված է *duž- դժ* “վատ” և *anhav* “լինել, էություն, կյանք, գոյություն” բառերից՝ “վատ կայան”: Նախագրային շրջանից է: ՆՀԲ-ում՝ “1. Խորք երկրի. ծոց հողոյ հեռագոյն՝ ի ծագաց երկնից. որպէս գեհեն. տարտարոս. սանդարամետք. բանտ դիւաց և դատապարտելոց. 2. գոգն Աբրահամու, միանգամայն և գերեզման”: Որպես նախադաս բաղադրիչ՝ *դժոխ*-ով ՆՀԲ-ում վկայված է 54 բառ: Հոմանիշներ՝ *գեհեն, արարարոս, սանդարամետք, լիճ հրոյ, իշխանութիւն խաարի, գերեզման*: Կազմված են բազմաթիվ դարձվածքներ: *Դժոխ(ք)* բառի մյուս նշանակությունը “դժվար, դժվարին” է. հանդիպում է բաղադրություններում՝ *դժոխաբուժելի, դժոխագիւր* և այլն: Ավելի ուշ ստացել է փխբ. իմաստ՝ *անտանելի վիճակ, խառնաշփոթություն, անկարգություն, տանջանք, տառապանք* և այլն: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում կցորդության հիմունքով: *Դժոխք* բառին զուգահեռ գրաբարում գործածվում էր *սանդարամետք*-ը: **Սանդարամետ**: Միջ. պարսկ. *spandāramat (spandaramat)*՝ *երկրի դիրք*: Գրաբարում՝ “խորք երկրի, անդունդք, վիհ, ստորերկրեայ վայրք, ծոց հողոյ, դժոխք”: *Սանդարամետք*-ի նախնական ձևը *Սպանդարամետք*-ն է: Ըստ զրադաշտականության՝ աշխարհը բաժանվում է 2 թագավորության՝ բարու և չարի: Առաջինը գլխավորում է Ահուրա-Մազդան՝ Արամազդը, Արիմանը չարի ու խավարի արարիչն է: Արամազդի շքախմբի անդամներն են *ամէշասպէնտաները*՝ “սուրբ անմահներ”, որոնցից մեկն էլ *սպէնտա Արմայիտին* էր՝ սուրբ իմաստությունը (Կ. Կոստանեան, Հայոց հեթանոսական կրօնը, 1879, 28- 29): Հին պարսիկները խնամակալ աստվածուհու անունով խնամակալին ևս կոչում են նույն անունով՝ *Սպենտա Արմայիտի* – խոհականության աստվածուհի և *Սպենտա Արմայիտի* – երկիր: Ե՛վ ՀՀԲ-ն, և՛ ՆՀԲ-ն տարբերակում են *Սպանդարամետք*-ը և *Սանդարամետք*-ը: Առաջինը աստվածության անվանումն է, երկրորդը՝ *դժոխքի*: *Սպանդարամետք* աստվածության անվանումը ժողովուրդը մոռացել է, իսկ *սանդարամետք* (դժոխք) պահպանվել է: *Սպանդարամետք-Սանդարամետք*-ը, որ հին հայերի և հին պարսիկների համար “սուրբ իմաստության” կրողն էր, քրիստոնյա հայերը գործածում են բացասական իմաստով: Տեղի է ունեցել բառիմաստի շրջում գաղափարախոսության փոփոխության հետևանքով: ԱՀԲԲ-ում *սպանդարամետք*-ը վկայված չէ, *սանդարամետք*-ը՝ *վիհ, անդունդ, դժոխք, դժոխքի ոգի*, “*հնացած*” նշումով է: **Չոհ**: Միջ. պարսկ. շօհ: ՆՀԲ-ում՝ “Չենլի սպանդ, և ամենայն ինչ ծախելի կամ ծխելի՝ ի պատիվ Աստուծոյ”: Ս. Գրքում՝ 331 վկայություն: Ավելի ուշ, հիմնական՝ կրոնական իմաստից բացի, ստացել է նոր իմաստներ՝

“1. մարդ, որ խոշտանգվում կամ մեռնում է՝ ենթարկվելով բռնության, 2. մարդ, որ տուժում է ուրիշների շահերի համար, 3. մահ կամ զրկանք, որ մարդ հանձն է առնում որևէ գաղափարի համար, 4. զոհ մատուցելու կրոնական արարողությունը” և այլն (ԱՀԲԲ): Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում կցորդության հիմունքով: **Կախարդ:** Գրաբարում՝ *դիւթ, վիուկ, մոգ. սուր և խարդախ մարգարէ. դեղապուր. թովիչ* և այլն: Կցորդության հիմունքով ձեռք է բերել է *հնարագետ, թովիչ, ճարպիկ* իմաստները: **Կախարդասար-ը՝** *կախարդ, կախարդական* իմաստով, ամբողջական փոխառություն է: Օր.”Եւ բազումք ի կախարդասարացն բերէին զգիրս...” (Գրծ. ԺԹ. 19)՝ “Եւ կախարդութեամբ զբաղվողներից շատերը բերում էին իրենց գրքերը...”: Ըստ Ջահուկյանի՝ *կախարդների գլուխ, կախարդապետ:* Աշխարհաբարում *կախարդապետ* իմաստը չի երևում: Ըստ Լ.Հովհաննիսյանի՝ բառի երկրորդ բաղադրիչը իրանյան *sar* “գլուխ” բառը չէ, այլ *h.-ե. *k’er-ը՝* *հայ. սար(ք), սար(ել),* այսինքն՝ բառը կունենա “կախարդություն սարքող, կախարդություն անող” իմաստը: **Հմայ(ք):** Միջ.պրսկ. *humāy.* արմատն է՝ *māyā՝ օրհնութիւն, երջանկութիւն:* Գրաբարում՝ “կախարդութիւն, կախարդական գուշակութիւն, յուռութք, պահպանակ”: Հմայությունն ընդհանուր էր. զանազան տեսակները անվանվում էին *հմայ-ին* ավելացնելով որևէ բառ՝ *լերդահմայություն, հավահմայություն, ջրահմայություն* և այլն: *Հմայությունը* հատուկ է եղել հեթանոսությանը: Հիմնականում թարգմանվել է *կախարդություն:* Հետագայում *հմայ(ք)-ը,* հիմնական՝ կրոնական՝ “1. հմայություն, 2. հմայված իր, հմայակ” իմաստներից բացի, ձեռք է բերել նոր, փխբ. իմաստ՝ *հոգեկան կամ ֆիզիկական գերող հասկություն, հրապույր.* կազմվել են նոր բառեր՝ *հմայաբեր, հմայիչ, հմայչություն, հմայքոյր* և այլն: Տեղի է ունեցել իմաստափոխություն կցորդության հիմունքով: **Հրաշ(ք):** Անեզական է՝ “1.” սբանչելի, գործ զարմացուցիչ, որպէս գեր ի վեր, քան զբնութիւն կամ զկարծիս. նշան կամ արհեստ աստուածային. ահաւոր և հիանալի”, 2. հրէշք. ցնորք, այլանդակ իրք կամ կենդանիք խառնափնդորք. դիական արուեստք” (ՆՀԲ): ՀՀԲ-ն *հրաշք-ը* և *հրէշք-ը* նույնն է համարում, ՆՀԲ-ում և ԱԲ-ում *հրէշ-ը* *հրաշք-ի* երկրորդ իմաստն է: Մեր նախնիները, *հրէշ* ասելով, հավանաբար, հասկանում էին ոչ սովորական արարածներ: Հավանաբար որոշակի դեր է խաղացել կենդանիների պաշտամունքը: *Հրաշ-ից է հրէշ* բառը: Տեղի է ունեցել *հրաշ-հրէշ* հնչյունական, ապա իմաստային անցում (այդպիսի իմաստային անցում կա նաև ռուսերենում՝ *чудо-чудовище*) (Ջահուկյան, 1987, 561): *Հրաշ-ով* բաղադրված բառերը ՆՀԲ-ում՝ 73, Լ.Հովհաննիսյանի ԳԲ-ում՝ 7, ԱՀԲԲ-ում՝ 89, ՆԲ-ում՝ 5: ՆՀԲ-ն *հրէշ-ով* բառ չի վկայում, ՀԲԲ-ն՝ *հրէշային, հրէշաւոր, հրէշերե* (անձանոթ կենդանի), *հրէշութիւն, ԱՀԲԲ-ում* նոր են *հրեշաբար, հրեշադեմ, հրեշակերպ, հրեշածին, հրեշավոր, հրեշափոյ, հրեշացնել:* Գրաբարում նույն կամ մոտ իմաստներ ունեցող *հրաշ* և *հրէշ* բառերը հետագայում ստացել են հակառակ իմաստներ: Արդի հայերենում *հրաշ(ք)* բառի գլխավոր իմաստով կրոնական է՝ *գերբնական զորութեամբ առաջացած*

երևույթ: Ձեռք է բերել նոր իմաստներ՝ *անսովոր, անակնկալ դեպք, անբացատրելի գործ, երևույթ*: Տարարժեք է. ունի նաև ածականական կիրառություն՝ *հրաշք աղջիկ*: Հրեշ (*հրեշ*) բառը նմանության և կցորդության հիմունքներով ստացել է նոր իմաստներ՝ 1. *ահռելի մեծության գազան, կենդանի*”, 2. *անսովոր տեսքով մարդ, կենդանի*, 3. *չար տգեղ*, 4. *փխբ. անգութ, կատաղի, գազանաբարո*: Ե՛վ *հրաշք/ք*, և՛ *հրեշ* բառերն ունեցել են բառիմաստի ընդլայնում: **Հրեշտակ**: Միջ. պրսկ. *frēštak* –ից՝ *պարզամտոր երկնային, դեսպան Աստուծոյ՝ զուարթուն երկնից, պարզամտոր երկրային, սուրհանդակ, լրաբեր, մարգարէ* (ՆՀԲ): Բառն սկզբնապես ունեցել է “պատգամավոր, թղթատար” իմաստները՝ “...եւ առաքեսցուք *հրեշտակս* ...” (ԱԹագ. ԺԱ. 3): Մյուս՝ *Տիրոջ հրեշտակ* կամ *Աստուծո հրեշտակ* իմաստները նույնպես գործածական էին գրաբարում: Բառի երկու իմաստներն էլ (ՆՀԲ) հավասարապես գործածելի էին: Ս.Գրքում՝ 492 վկայություն: Նոր կտակարանում *հրեշտակ* բառի “Աստուծո պատգամաբեր” իմաստն է հաճախական: *Հրեշտակներին* վերագրվում են զանազան հատկություններ՝ *պահապան հրեշտակ, հոգեառ հրեշտակ* և այլն: Փխբ. ունի *հեզ, բարի, չքնաղ, գեղեցիկ* իմաստները: Բաղադրված բառերի մեծ մասը պատկանում է կրոնական տերմինահամակարգին՝ *հրեշտակաբեր, հրեշտակաբենակ* և այլն, մյուս մասը գործածական է բանաստեղծական մասնաշեղջերում՝ *հրեշտակագեղ, հրեշտակասիրտ* և այլն: Ղարաբաղի բարբառում *հրեշտակն* ունի *հրեշտորակ* ձևը՝ բացասական երանգով: Համապատասխան զուգահեռ կա ռուսերենում: **Մարգարէ**: Միջ. պրսկ. **mārgar*-ից՝ *Գուշակ հանդերձելոց՝ ճշմարիտ կամ սուր. մանաանդ ճշմարիտ պարզամախոս ի դիմաց Աստուծոյ. տեսանող* (ՆՀԲ): Ավելի ուշ ձեռք է բարել նոր իմաստներ՝ “1. նա, որ գուշակում է ապագան, բժշկություններ և հրաշքներ է գործում, 2. Ասվում է մահմեդականության հիմնադիր Մուհամեդի համար” (ՀԲԲ): Ս.Գրքում՝ 535 վկայություն: Հայ մատենագրության մեջ մեծ թիվ են կազմում աստվածաշնչյան մարգարեությունների մեկնությունները: **Մեհեան**: Միջ. պրսկ. **meh* (Միհր աստվածը). *եան*-ը հայերեն ձևույթ է՝ “Տուն կոոց, տաճար հեթանոսաց, տեղի՝ դից նուիրական կամ սեղան դից” (ՆՀԲ): Բառը հարազատ է եղել հայ ժողովրդին. վկայությունը բաղադրված բազմաթիվ բառերն են: Ս.Գրքում՝ 36 վկայություն: Սկզբնապես, ենթադրվում է, *մեհյան* կոչվել են միայն Միհր աստծուն նվիրված տաճարները, որոնք հետագայում ստացել են “*հեթանոսական տաճար*” ընդհանուր անվանումը: Գառնու հեթանոսական տաճարը նվիրված է Միհրին: Տեղանուններ՝ *Մեհենագյուղ, Մեհենակերտ*: Արդի հայերենում՝ *հեթանոսական տաճար, կրակատուն*: **Մոգ**: Միջ. պրսկ. *moγ(moγu)* “կախարհ”՝ *Մարգարէ հեթանոսաց. սուր գուշակ, հմայող, քաղդեայ, գէտ. քուրմ. աստղագէտ, կրակապաշտ* (ՆՀԲ): Ս.Գրքում՝ 14 վկայություն: *Մոգերը* իրանական կրոնի քահանաներն էին զրադաշտականության ժամանակ: *Մոգպետ*-ն ուներ *մովպետ* տարբերակը: *Մովպետան մովպետը* զրադաշտական կրոնի գլխավոր քահանայապետն էր: *Մոգը* արդի հայերենում ձեռք է բերել նոր, փխբ. իմաստ՝ “որևէ ձիրքով բոլորին հմայող,

գերող մարդ” (ԱՀԲԲ): **Նզով-ք** (միջ. պրսկ. **nizav*)՝ *բանադրանք, անաթեմայ, անէծք* (ՆՀԲ): *Նզովքը* եկեղեցու սահմանած բարձրագույն պատիժն է ուղղափառ դավանանքի դեմ մեղանշողների նկատմամբ : Ս. Գրքում՝ 49 վկայություն: Բաղադրված են *նզովեմ, նզոված, նզովանք բառերը* (ՆՀԲ): *Նզով(ք)-ը* արդի հայերենում պատկանում է կրոնական տերմինահամակարգին՝ “եկեղեցական հաղորդակցությունից զրկում, արտաքսում, անեծք” : Գործածական է *նզովել* բայի գրաբարյան անցյալ դերբայը՝ *նզովեալ*՝ “նզովքի ենթարկված” : Նոր են *նզովագիր, նզովալից, նզովախոս* բառերը (ԱՀԲԲ): **Նուէր**: Միջ. պրսկ. *nivēd*-ից՝ “ընծայ Աստուծոյ, նոր պտուղ, սրբազան բան մը, զոհ, յիշատակ” (ԱԲ): Սկզբնապես *նուէր* բառի հիմնական իմաստները առնչվում էին կրոնին՝ *զոհ, պատարագ*, որ մատուցում էին աստվածներին, ՀԲԲ-ում՝ *ընծա, փաճարին ընծայված որևէ բան, զոհ, ծոն* և այլն: Վերոնշյալ իմաստները հատկապես հինկտակարանյան են: Այնուհետև միայն աստվածներին ձոնված *նուէրը* կորցնում է իր հիմնական նշանակությունը և պահպանում միայն “ընծա” նշանակությունը, որն էլ հետագայում դառնում է նրա առաջնային իմաստը: Բարբառներում հանդիպող “նուէրք”-ը թերևս առնչություններ ուներ հեթանոսության հետ. հմմտ. Ակնի բարբառում ունի *չար ասքից ազարվելու կախարդական միջոցներ*, ՀԲԲ-ում՝ *հեթանոսական փոներին խառնակ անատակության նվիրվելը*: Յետևելով *նուէր* բառի պատմական զարգացմանը՝ տեսնում ենք, որ բառի նախկին՝ հինհայերենյան իմաստները, որոնք վերաբերում էին կրոնին, դուրս են եկել գործածությունից: *Նուիրակ* նշանակում էր “ծանուցիչ, ազդարարող” : Ավելի ուշ՝ *պաշտօնեայն եկեղեցական, դեսպան հոգևոր*: Ինչպես *նուէր*, այնպես էլ *նուիրակ* բառը գործառական հիմունքով ունեցել է իմաստափոխություն: Այժմ *նվիրակը* կաթողիկոսի կողմից օտար երկիր իբրև պատգամավոր ուղարկվող բարձրաստիճան հոգևորական է, նաև՝ որևէ պետության մեջ Հռոմի պապի դեսպանը (լեզատ): **Պաշտ(եմ)**: Արմատն իրանական **parištā*՝ *պաշտամունք*-ից է՝ “շուրջը կանգնել” : *Պաշտ* արմատի նախնական ձևը *պարիշտ-ն* է՝ *ամբարիշտ* (ան-պարիշտ), *դժպարիշտ*: *Պարիշտել* -ի անշեշտ *ի-ն* դուրս է ընկել՝ դառնալով *պարշտել*, ապա *ր-ի* անկումով՝ *պաշտ* (ՀԱԲ). բաղադրված են բազմաթիվ բառեր: *Պաշտ-ից* ածանցված *պաշտօն* բառի հիմնական իմաստները գրաբարում կրոնական էին՝ *պաշտօն առեալ, պաշտօն մատուցանել, պաշտօն փանել* (Եզնիկ): Արդի հայերենում՝ *ծառայություն որևէ հիմնարկում, աշխատանք, պարտականություն, հաստիք*, և բաղադրված բառերից ոչ մեկը կրոնական չէ՝ *պաշտոնաթերթ, պաշտոնաթող* և այլն: *Պաշտօն* բառի “պաշտամունք” իմաստը հնացած է: Բարբառներում կան *պաշտոն-պատարագ* և *պաշտում-պատարագ* բառերը՝ “ժամերգություն, պատարագ”, *պաշտումահաց*՝ “հոգեհաց” : **Օրին-** (միջ. պարսկ. **āfrīnam*՝ “օրինեմ”) կազմված *ā* նախամասնիկով և *frī*՝ “սիրել, գովաբանել” արմատից < *h.-ե. *prēi-, *pri-* “դուր գալ”): *Օրին-*ով բաղադրված բառերի մի մասը հետհինգերորդ դարյան վկայություններ են: Ս. Գրքում *օրինել-ն* ունի 604,

օրհնութիւն-ը՝ 265 վկայություն: Վերջինս, ըստ ՆԸԲ-ի, օրհնելն և օրհնիչն՝ ըստ ամենայն առման. բանն և արդիւնքն օրհնելոյ. օրհներգութիւն: Հետագայում կցորդական իմաստափոխության հիմունքով բառի իմաստը ընդլայնվել է՝ ծնողների բարեմաղթություն, աղոթք, օրհնության նշան, ընծա և այլն: Օրհնեալ-ը (օրհնեմ բայի գրաբարյան անցյալ դերբայը) ունի անկախ գործածություն և բառարանային արժեք:

բ) **Հնաբանություններ են** ախտար(ք) ախտարմար, ապաշաւ “գղջում”, ապիզար “նզովք, անեծք”, բագ-, դրուժ “չար ոգի”, զեն, համբարու, յագ, յաշպ, նաև իրանական հին կրոնին վերաբերող բառերը՝ աթաշ, բարսմունք, բոզպայիպ, գոմէզ (գումէզ), դեն, դենիմազդեզն, կեշպ (քէշ), համակդեն, մոզպեպ, ուպ, քրպիկար: Զրադաշտականությանն առնչվող բառերը ըստ անհրաժեշտության գործածվել են այդ կրոնին վերաբերող երկերում: Դրանք հասկանաչվում են նեղ իրադրական կիրառությամբ, սահմանափակ գործածությամբ:

Աշխատանքի երկրորդ գլուխը (Կրոնակեղեցական տերմինների իմաստագործառական քննություն) բաղկացած է 5 ենթագլխից:

2.1. ենթագլուխը վերաբերում է “պատարագ” բառին. ուներ “նուէր, ընծայ, զոհ, մատաղ” իմաստները, պահպանված են միջին հայերենում: Հետագայում՝ նաև “քրիստոնեական եկեղեցիներում՝ խորհուրդ, իբրև հիշատակ խորհրդավոր ընթրիքի”: Բառի “զոհ” իմաստին են առնչվում “այժից պատարագ” և “քավության նոխագ” արտահայտությունները (Ղևտ. ԺԶ. 7-8): Այժը Հայկական լեռնաշխարհի ցեղերից շատերի տոտեմներից է: Այժի պաշտամունքի հետքեր կան մեր մատենագրության մեջ, “Սասունցի Դավիթ” էպոսում, տեղանուններում՝ Այծպրկունք, Այծասար, Այծաբերդ և այլն: Կան շատ դարձվածքներ՝ էծերը գալ, էծերով մարդ և այլն: Ըստ բանահյուսական տվյալների՝ այժը կապ ուներ անդրշիրիմյան աշխարհի հետ: Այժից պատարագը կապված էր իրենց մեղքերը քավելու համար այժին զոհաբերելու գաղափարի հետ, որն ավելի ուշ առնչվում է քրիստոնեական գաղափարախոսությանը, և Քրիստոսն է դառնում զոհ մարդկանց մեղքերի քավության համար՝ իր վրա վերցնելով նրանց մեղքերը: Պատարագ բառի ստորագրային 258 վկայություններից 208-ը հինկտակարանյան են: Արդի հայերենում բազմիմաստ է՝ քրիստոնեական եկեղեցու գլխավոր պաշտամունքային արարողությունը, ժամերգություն, հաճելի երաժշտություն և այլն: Պատարագ բառն ունեցել է բառիմաստի ընդլայնում կցորդության հիմունքով: Բառի “զոհ, մատաղ” իմաստները արդի հայերենում չեն գիտակցվում:

2.2. ենթագլխում քննվում են հայ առաքելական եկեղեցու 7 տերունական խորհուրդների անվանումները, որոնցից մկրտությունն ու հաղորդությունն են հաստատված Քրիստոսի կողմից: **Մկրտություն:** “Նորածին երեխային կամ քրիստոնեության դարձողին երեք անգամ ընկղմել ավազանի ջրի մեջ, կնքել, փխբ. անվանակոչել” (ԱՀԲԲ): Մկրտությունը կատարվում է՝ սրբելու, մաքրելու համար մկրտվողի մեղքը, որը, ըստ աստվածաբանների, կոչվում է առաջին կամ սկզբնական մեղք:

Հ.Բեյլին հավանական է համարում բառի իրանական ծագումը (տե՛ս H.Bailley, Iranian MKTK-, Armenian Mkrtem, REA,1980,8): *Մկրտության* խորհուրդը առնչվում է ջրի պաշտամունքին, հավանաբար նախաքրիստոնեական է: Ջրով մկրտվելուց հետո մկրտվողը դրոշմվում կամ օծվում է մեռնով: *Դրոշմ* բառի իմաստներից մեկը *կնիք* է (այստեղից՝ *կնքավոր-քավոր* իմաստային անցումը): Ժողովուրդն անվանում է *կնունք*: **Ապաշխարություն՝** “*Ձոջումն ի մեղաց. ցավ. ապաշա. դարձ, և յանձնառութիւն կամատր ճգանց*” (ՆՀԲ): Բազմիցս վկայված է Նոր կտակարանում: *Ապաշխարել*-ն ունի “գործած հանցանքի՝ մեղքի համար զոջալ, մեղքը քավել, փխբ. նեղություն կրել” իմաստները: *Ապաշխարությունը* արդի հայերենում գործածվում է միայն կրոնական իմաստով: **Հաղորդություն (սուրբ պատարագ):** *Հաղորդվել* նշանակում է մի բանի մասնակից լինել, կրոնական իմաստով՝ միանալ Հիսուս Քրիստոսին՝ մասնակցելով սուրբ պատարագի խորհրդին: **Պսակ:** Փոխառություն է իրան. pusa'k-ից՝ “թագ”: Արդի հայերենում ունի 19 իմաստ: *Պսակը* այր ու կնոջ ամուսնության խորհուրդն է (Մտթ. ԺԹ. 5-6): **Կարգ ու օծումն հիվանդաց:** Այս կարգը սկզբունքով նույնանում է ապաշխարության խորհուրդի հետ: Մեր եկեղեցում այն միացված է Առաջին օծումին՝ Դրոշմին:

2.3. ենթագլխում քննվում են հայ եկեղեցու սպասվորների կոչումներն ըստ հոգևոր աստիճանակարգի՝ նվիրապետության՝ *դպիր, սարկավագ, քահանա (աբեղա), վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, կաթողիկոս*: Միջ. պրսկ. *դպիր*-ի՝ “քարտուղար, գրագիր” սուրբգրային վկայությունները հիմնականում հինկտակարանյան են, որ թարգմանվել են նաև *վերակացու* (Ել.Ե.6), *սպա* (Բ Օր., Ի. 5, Բ Օր., Ի.8, Բ Օր., Ի.9, Աստուածաշունչ, 1999), Նոր կտակարանում՝ նաև *օրինական* կամ *օգնագէտ*: Բառը գրական լեզվից է անցել բարբառների: *Սարկավագ*-ն ստուգաբանված չէ. նորկտակարանյան է՝ “սպասավոր, ծառայ”, առաքյալների ժամանակ՝ քրիստոնեական համայնքի տնտեսական գործերով զբաղվող անձ, այժմ՝ քահանայից կրտսեր եկեղեցական պաշտոնյա: Ասորերենից փոխառյալ *քահանայ* բառը Հին կտակարանում Ղևտական ցեղից ընտրված կրոնական արարողություններ կատարող անձ էր, հետագայում՝ քրիստոնեական եկեղեցիներում՝ պաշտոնյա, որ կատարում է բոլոր կարգերը՝ բացի ձեռնադրությունից: Հայերենի ժողովրդախոսակցական տարբերակում և բարբառներում անվանում են *տերտեր, տեր, ադեր* և այլն: Տրվում է նաև *երէց* անվանումը (առավելապես՝ գյուղի քահանաներին): *Տեր պապա*-ն բնորոշ է արևմտահայերենին: *Շուշտակ*-ը գործածվում է այրիանալուց հետո կուսակրոն դարձած հոգևորականի համար (օր.Նորիմյան Հայրիկը): Ասորերենից փոխառյալ *աբեղայ*-ն՝ “տխուր, տրտում” իմաստով, Ա.Գրքում վկայված չէ: Հայ հին մատենագրության մեջ ևս հաճախական չէ. ունեն *Փարպեցին, Բուզանդը* (Բուզանդի 3 վկայություններում գերակա է “մենակյաց, անապատական” իմաստը): *Աբեղան* կուսակրոն քահանան է, որ առանձին օրինությամբ կարող է ստանալ վարդապետի գավազան: Բառը

գրաբարում բաղադրության մեջ էր մտնում երկու ձևով՝ *աբեղա-աբեղայական* և *աբեղ-աբեղություն*, *աբեղաթաղ* և այլն: Միջ. պարսկ. *վարդապետ*-ի աստվածաշնչյան 75 վկայություններից երեքն են հինկտակարանյան. թարգմանվել են *վերակացու* (Բ Մկբ. Ե. 22), *դաստիարակ* (Բ Մկբ. Ա.10), *օրէնքի վարդապետ* (Ա Եգր. Ը. 45-46): Նոր կտակարանում ունի “ուսուցիչ” իմաստը: Արդի հայերենում՝ *կուսակրոն քահանա*, *հոգևորականին տրվող գիտական աստիճան*: Հունարենից փոխառյալ նորկտակարանյան *եսխսկոպոս*՝ “հոգևոր բարձրագույն աստիճանավոր, եկեղեցու առաջնորդ, հովիվ”, *քորեսխսկոպոս*՝ “գավառների կրոնական տեսուչ, առաջնորդին փոխարինող”, *արքեսխսկոպոս*՝ “եսխսկոպոսապետ” և *կաթողիկոս* “քահանայապետ, հայրապետ” իմաստներով տերմինները փոխառություն են հունարենից. հինգերորդ դարյան վկայություններ են:

Դիտարկված բառերից մի քանիսը ա) Ս.Գրքում վկայված չեն (*աբեղայ*, *կաթողիկոս*, *արքեսխսկոպոս*, *քորեսխսկոպոս*), բ) քրիստոնեության մուտքից հետո են ստացել կրոնական իմաստ. Հին և Նոր կտակարաններում տարբեր իմաստներ ունեն (*դպիր*, *վարդապետ*), գ) նորկտակարանյան են (*եսխսկոպոս*, *սարկաազ*):

2.4. ենթազվխում քննել ենք կրոնական բնույթի բառերից և անձնանուններից առաջացած որոշ տեղանուններ: Հատուկ անունները ենթարկվում են արտալեզվական զանազան գործոնների ազդեցության՝ պատերազմներ, բռնազավթումներ և այլն: Քրիստոնեական գաղափարախոսության հետ կապված՝ սրբավայր-տեղանունների անվանումները հիմնականում պատճառաբանված են:

1) Ըստ առաջացման աղբյուրի՝ սրբավայր-տեղանունները բաժանել ենք մի քանի խմբի՝ ա) անձնանուններից առաջացած, բ) տվյալ տեղանունից առաջացած, գ) բնորոշ հատկանիշով պայմանավորված կամ որևէ ավանդության հետ կապված, դ) կրոնական բնույթի բառերից առաջացած: Դիտարկել ենք *աստված*, *աղոթք*, *առաքյալ*, *ավետարան*, *խաչ*, *մատուռ*, *նահապակ*, *փրկիչ* և այլ բառերով կազմված սրբավայրերը: *Սուրբ Աստվածածին* կամ *Սուրբ Աստվածամայր* անվանումով 100-ից ավելի սրբավայրերի մի մասը կրում է *Մարիամ Աստվածածին*, երբեմն՝ *Մարիամ* անունը: *Փրկիչ* կամ *Ամենափրկիչ* անվանումը սրբավայրին կարող է տրված լինել ոչ միայն Հիսուսին նվիրված լինելու, այլև սրբավայրի բուժիչ լինելու հանգամանքով. *առաքյալ*-ով բաղադրված վանքերի ու եկեղեցիների մեջ առանձնանում են *Մշո Սուրբ Առաքելոց վանքը* և *Կարսի Սուրբ Առաքելոց Մայր եկեղեցին*: *Խաչ*-ով սրբավայրերը 30-ից ավելի են. մի քանիսն ունեն զուգահեռ անվանումներ՝ *Սուրբ Խաչ - Տեղերի վանք*, *Սուրբ Խաչ- Ծիծռան վանք*: Որոշակի քանակ են կազմում *հոգի*, *ճգնավոր*, *նահապակ* բառերով կազմված սրբավայրերը:

2) *Հովհաննես*-ով կազմված սրբավայրերի մի մասը կրում է *Հովհաննես Մկրտչի* (Կարապետ), մյուս մասը՝ *Հովհաննես Օձնեցու*, *Հովհաննես Ավետարանչի* անունները. մի քանիսն ունեն լրացուցիչ տեղեկություն՝ ա) որտեղ է կառուցված սրբավայրը, բ) ավանդության կամ արտաքին տարբերակիչ հատկանիշով

այայնանավորված: *Սուրբ* որոշիչը երբեմն միանում է *Հովհաննես* անձնանվան տարբերակային ձևերին՝ *Սրբանեսի վանք*, *Սուրբօհան*, *Սուրբօվանես*: Հաճախ *Հովհաննես*-ով կամ նրա կրճատված ձևերով կազմված բառակապակցական տերմինները դառնում են բարդ բառեր՝ *Անավանք*, *Հանավանք*, *Հովանավանք*, *Հովհաննավանք*, *Օհանավանք*:

2.5. Ենթազխում քննվել են “չարը” խորհրդանշող սուրբգրային մի քանի անվանումներ: Աստվածաշնչում “չարի” հիմնական կրողը *սափանան* է՝ ասոր. *sātānā*-ից՝ “հակառակորդ” < եբր. *sātān* “թշնամություն անել”՝ “Իբր հակառակ, դիմակաց, դիմախօս” (ՆՀԲ): *Սափանայ*-ն ունի *սափան* տարբերակը, որոնք ՆՀԲ-ում և Աստվածաշնչի համաբարբառում ներկայացված են առանձին բառահոդվածներով: Ս.Գրքում *սափան*-ն ունի 3, *սափանայ*-ն՝ 86 վկայություն: Բառն ունեցել է բառիմաստի ընդլայնում հիմնականում կցորդային հիմունքով՝ *չար ոգի*, *խորամանկ*, *հնարագետ*, *չարածճի*, *ճարպիկ*, *ճարպար*, *տգեղ*, *այլանդակ*: ՆՀԲ-ում բաղադրված են 14, ՀԲԲ-ում՝ 17, ԱՀԲԲ-ում՝ 16, ԺՀԼԲԲ-ում՝ 15 բառեր: Ս.Գրքում “սատանայ”-ին տրվում են նաև այլ անվանումներ՝ “ստի հայր”, “վիշապ, հին օձ” (ՔՀ) և այլն: Դարձվածքներում հաճախական է *սափան* տարբերակը: **Ազազայել (ազազել)**: Ըստ Աճառյանի՝ նորագյուտ բառ, որ 4 անգամ գործածել է Եփրեմ Ասորին: Աստվածաշնչի “Եւ արկցէ Ահարոն ի վերայ երկուց նոխազացն վիճակս, վիճակ մի Տեսոն և վիճակ մի *արծակելոյ*” (Ղևտ. ԺԶ. 8) նախադասության “արծակելոյ” բառի փոխարեն Եփրեմ Ասորին “Ղևտացոց” մեկնության մեջ գործածել է “ազազայել” բառը: *Ազազայել*-ը նույն “քավության նոխազն” է, որին ազատ են արձակում դեպի անապատ: *Ազազայել*-ը եբր. *azāzēl*, հայերենին անցել է ասորերենի միջնորդությամբ՝ “անապատներում բնակվող չար ոգի”: Հայերենի բարբառներում՝ “կտրիճ, կրակի կտոր, կատաղի”: Թերևս, ասորերենից հայերենին անցած ժողովրդական փոխառություն է: **Բելիար** (<հուն. βελίαρ < եբր. *baliya'al*՝ բառացի “անօգուտ”): Հետազայում կցորդային հիմունքով իմաստափոխվել է և ստացել “չար, վատ” իմաստները՝ վերագրվելով սատանային: Նոր կտակարանում գործածված է մեկ անգամ որպես հատկանուն. “Եւ կամ զինչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ *Բելիարայ*...” (Բ Կրնթ. 2. 15. 16): **Բէեղզեբուզ** (<հուն. βεελζεβουβ < եբր. *be'be'elzebus* “ճանճիկ իշխան”): Հայերենին անցել է հունարենի միջնորդությամբ: Ավելի ուշ ստացել է *սափանա* իմաստը: Օր.՝ “...Ոչ իւիք հանէ դա զդես, եթէ ոչ *Բէեղզեբուզա* իշխանան դիաց” (Մտթ. ԺԲ. 24): Բառը հաճախական չէ. գործածվում է միայն կրոնական տերմինա-համակարգում: **Մամոնայ** (<հուն. «ասոր. *māmōnā*՝ ”ունեցվածք, հարստություն, սատանայ”)՝ *Մթերք ընչից. ինչք. մեծութիւն, մանաւանդ ժողովեալ անիրաւութեամբ և վաշխիւք* (ՆՀԲ): Նոր կտակարանում հարստությունը մարմնավորող կուռք է: Ս.Գրքի 4 վկայություններն էլ նորկտակարանյան են: **ՆեՌ/Ն**/: ՆՀԲ-ի հեղինակները, նրանց հետևողությամբ Հ.Աճառյանը և Գ.Ջահուկյանը բառի ծագումը առնչում են Ներոն կայսեր անվանը: Հյուբլանի կարծիքով՝ հնչյունական

օրենքներով կարելի էր բացատրել *Ներոն-Նեո* անցումը (վերջին վանկի ծայնավորի սղում, ն-ից առաջ ռ-ի անցում ո-ի), սակայն հնչյունական օենքների ժամանակագրական հաջորդականությունը խանգարում է դրան: (Հ.Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2004, էջ 46): Գրաբարի բառարաններում՝ *սուպ քրիստոս, անտիքրիստոս, չարագործ, չար ոգի*, իր առաջնային իմաստից բացի՝ ԱՀԲԲ-ում՝ փխբ. *չար՝ նենգ մարդ: Նեո/ն/* Աստվածաշնչում գործածված է հինգ անգամ (համապատասխան տեղերում՝ հունարեն, լատիներեն, ասորերեն, վրացերեն բնագրերում, *Անտիքրիստոս* է) և դրանց մեկնություններում:

Եթե բառը ստացվածքային բառաշերտի հետ առնչություններ չունի, ապա բառիմաստի ծագման համար կարելի է առնչություններ որոնել *նեո/ն/* և *ների՝* “արու այծ” բառերի միջև: *Ների* բառը վկայված չէ ՀԱԲ-ում, մեզ հայտնի գրաբարի բառարաններում, ՄՀԲ-ում. վկայված է ԱՀԲԲ-ում, ԺՀԼԲԲ-ում և ՀԼԲԲ-ում: Իրանական լեզուներից փոխառյալ *նոխագ*-ը (nohāz) նույնպես “արու այծ” է նշանակում: Կենդանիների սեռային տարբերակումը կարևոր է եղել անասնապահությամբ զբաղվող հնդեվրոպական ժողովուրդների համար:

Կարծում ենք՝ “արու այծ” հասկացությունն անվանվել է *ների* բնիկ բառով, որին փոխարինել է իրանական ծագումով *նոխագ*-ը: Ըստ բանասիրական տվյալների՝ հեթանոսական Հայաստանում *այծը* (*ների-ն*) զոհաբերվել է Սպանդարամետին՝ անդունդների աստվածուհուն: Հայաստանում առաջին տարվա ննջեցյալին Սուրբ խաչին ու վեն զոհաբերում: Առաջավորասիական տարածքում նույնպես զոհաբերում էին այծին (հմմտ. “քալության նոխագ”): Հ. Աճառյանը հայերեն *նեո* ձևից փոխառյալ է համարում Կապադովկիայի հունարեն *νῆρια* բառը “...որ ըստ Karolides 200, գործածական է ժողովրդական երգերի մէջ իբրև “Քարոն կամ մահ”. կանայք հասկանում են իբրև “միս աշխարհը”(ՀԱԲ): Կարոլիդեսի բառարանը մենք չկարողացանք գտնել (Աճառյանը գրում է, որ այդ բառարանում հեղինակը հավաքել է այն բառերը, որոնք գործածական են “Կապադովկիո արդի հունաց բարբառում, բայց հունարեն չեն”, և ենթադրում է, որ այդ բառերը հայերենից փոխառություն են (ՀԼՊ, 1, 133-134): Կապադովկիայի հունարեն բարբառում հանդիպող *νῆρια* (*ներիա*) բառը, հավանաբար, հայերենից անցած ժողովրդական փոխառություն է, որում առաջնայինը *ների* բառի կապն է անդրաշխարհի հետ:

Կարծում ենք՝ *ներին* ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է որպես չարի խորհրդանիշ՝ առնչվելով անդրաշխարհին: Տեղի է ունեցել իմաստափոխություն կցորդային հիմունքով: Ենթադրելի է, որ Աստվածաշունչ մատյանի հայ թարգմանիչները *Անտիքրիստոս* բառի փոխարեն գործածել են ժողովրդին ծանոթ *Նեո/ն/* բառը:

Աշխատանքի երրորդ գլուխն ունի 3 ենթագլուխ:

3.1. Ենթազգլխում կատարել ենք կրոնական-լեզվական տերմինների շերտաբանական վերլուծություն. առանձնացրել ենք՝ **1. ընդհանուր հայերենյան տերմին-**

ների շերտ-գործածական են հայերենի զարգացման բոլոր շրջաններում՝ *աղոթք, Աստված, դժոխք, դրախտ, եկեղեցի, կրոն, հրաշք, մեղք, պատարագ, օրհնություն* և այլն, **2. հին կամ գրաբարյան բառերի շերտ** - գործածական են եղել գրաբարում, ինչպես՝ *ազգաբոն* (սատանա), *ախտարմար* (աստղահմա), *դեն, կախարդասար, քաղդեսայ* և այլն, **3. միջինհայերենյան բառերի շերտ** - վկայված են 12-16-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական գործերում՝ *եկեղեցական, ժամարար, ժամպուն, մեղսեթող, քահանայթաղէք* և այլն, **4. արևմտահայերենին բնորոշ բառեր**- *գերեզմանօրհնողչեք, ժամավոր, խոստուկ* (խոստովանող), *հոգեբաժին* (տուրք քահանային՝ ննջեցյալի տիրոջից), *ձեռքպագ, ճաշակ* (հաղորդություն), *պահքկեր, փեր պապա* և այլն, **5. բարբառային և ժողովրդախոսակցական բառերի շերտ** - բարբառները և ժողովրդախոսակցական բառաշերտը գրական լեզուն հարստացնելու կարևոր աղբյուրներ են՝ *անեծքբերան, գիր անել, իրիցկին, ժամահաց, ժամպուն, մեռելահաց, մեռելապուն, ողորմաթաս, ողորմածիկ* և այլն, **6. նոր բառերի շերտ** -ստեղծվում են հայերենի բառակազմական հնարավորությունների օգտագործումով՝ *աստվածակենսորոն, դրախտանման, հավապուրաց, հավապաքնություն* և այլն:

3.2. ենթազգխում քննվում են կրոնանեկեղեցական բառաշերտի համալրման աղբյուրները: Ինչպես ընդհանուր բառապաշարի, այնպես էլ կրոնանեկեղեցական բառապաշարի համալրումը կատարվում է երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Ներքին աղբյուրներն են՝ ա) իմաստաբանական միջոցը (երբ համագործածական բառը տերմինացվում է), բ) բառաձանցումը և բառաբարդումը, գ) բառակապակցական տերմինների ստեղծումը: Մյուս աղբյուրներն են գրաբարը, միջին հայերենը, արևմտահայերենը և բարբառները: Արտաքին աղբյուրը օտար լեզուներից կատարված փոխառություններն են:

3.3. ենթազգխում կատարված է կրոնանեկեղեցական բառերի բառակազմական քննություն: Տարբերակում ենք երկու խումբ՝ միաբառ (համադրական) և բառակապակցական: Համադրական խմբի մեջ են մտնում արմատական, ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր տերմինները: Ածանցավոր բառերի կազմությանը հիմնականում մասնակցում են գոյականակերտ վերջածանցները: Բարդ բառերը ներկայացվում են տերմինային և ձևաբանական կաղապարներով: Որոշ տերմիններ կազմում են տերմինաշարքեր: Այս բառաշերտում բառակապակցական տերմինները հիմնականում երկանդամ կառույցներ են, արտահայտում են որոշիչ-որոշյալի կամ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություններ:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Հետխորհրդային տարիներին մեծացել է հետաքրքրությունը կրոնի նկատմամբ: Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում կրոնը կարևոր դեր ունի: Թվում է՝

գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ կրոնական գիտակցությունը պետք է նահանջ ունենար, սակայն ինչպես ցույց է տալիս ժամանակը, աշխարհում այն դեռևս մեծ դեր ունի: Բազմաթիվ պատերազմներ, բռնազավթումներ կատարվում են կրոնի քողի տակ: Հայ ժողովրդի կյանքում քրիստոնեությունը բացառիկ դեր է ունեցել: Այն ձեռք է բերել ազգային նկարագիր:

2. Դեռևս նախագրային շրջանում հայերենն ունեցել է կրոնապաշտամունքային ծեսերին, արարողություններին վերաբերող բառաշերտ, որ մեզ հասել է հինգերորդ դարից ավանդված գրականության միջոցով: Որոշ նախաքրիստոնեական բառեր հետագայում անցել են քրիստոնեությանը:

3. 5-րդ դարից գրավոր ավանդված հայերենի կրոնակեղեցական տերմինահամակարգը ներառում է տարբեր շերտեր՝ հ.-ե. ծագման բառեր և փոխառություններ: Թեև հ.-ե. ծագման բառերը մեծաթիվ չեն, սակայն հիմնական բառապաշարի մաս են կազմում և գործածության մեծ հաճախականություն ունեն: Այդ արմատների (բառերի) մի մասը ենթարկվել է իմաստային տարաբնույթ փոփոխությունների (ձեռք է բերել նոր իմաստներ, ունեցել բառիմաստի ընդլայնում տարբեր հիմունքներով, նաև ապատերմինացել): Ընդ որում, կարևոր դեր են ունեցել արտալեզվական գործոնները՝ գաղափարախոսությունների, հասրակական-քաղաքական կյանքի փոփոխություններ, լեզվակիր հանրույթի հոգևոր-մշակութային ընդհանուր մակարդակ և այլն: Բառակազմական տեսակետից հ.-ե. ծագման բառերը արդյունավետ են, կազմվել են բազմաթիվ ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր և բառակապակցական տերմիններ. մեծ թիվ են կազմում կայուն կապակցությունները և դարձվածքները: Հ.ե. ծագման դիտարկված բոլոր բառերը վկայված են Ս.Գրքում. դրանցից ա) մի մասը հինկտակարանյան է՝ եզակի վկայությամբ, բ) մի մասը վկայված է և՛ Հին կտակարանում, և՛ Նոր կտակարանում միջին հաճախականությամբ, գ) հաճախական են *Տէր*, *Աստուած*, *սուրբ*, *մեղք*, *հոգի*, *աղօթք* բառերը:

4. Հայերենի կրոնակեղեցական տերմինահամակարգում մեծ թիվ են կազմում փոխառությունները՝ կատարված ասորերենից, հունարենից և իրանական լեզուներից:

5. Աշխատանքում դիտարկված կրոնական բնույթի ասորական փոխառությունների մի մասը ա) գործածական է արդի գրական հայերենում կամ բարբառներում և ենթարկվել է իմաստափոխության, բ) հնաբանություն է: Այդ փոխառությունները հիմնականում առնչվում են քրիստոնեական գաղափարախոսությանը:

6. Հայերենի կրոնակեղեցական տերմինահամակարգում հունարենի միջնորդությամբ Աստվածաշնչից և այլ գրքերից հայ մատենագրություն ներթափանցած եբրայական բառերը ոչ թե փոխառություն, այլ “օտար” բառեր են:

Որոշ բառեր՝ *(այլևու(ի)ա), ամէն, ովսաննայ (օվսաննա)*, տերմին-բանաձևեր են՝ ընդհանուր բոլոր քրիստոնյաների համար:

7. Հունական կրոնական բնույթի փոխառությունները քանակով համեմատաբար շատ են, սակայն հաճախական են քչերը: Իմաստափոխության ենթարկվածներից բնորոշ են *ազապե, բեմ, եկեղեցի* բառերը: Հունական փոխառությունների մի մասը ա) արմատացել է հայերենում, բ) եզակի վկայություն է, գ) վկայված է ուշ շրջանից:

Հայ ինքնուրույն գրականության մեջ հունական ծագում ունեցող շատ կրոնական բառեր վկայված չեն և չեն մտել հիմնական բառաֆոնդի մեջ: Դրանք նեղուղորտ բառեր են՝ հաճախ եզակի վկայությամբ: Այդ փոխառություններից հաճախական և բառակազմորեն արդյունավետ են մոտ երեք տասնյակ բառեր: Մյուս բառերը կարելի է համարել մեկուսացած փոխառություններ:

8. Հայերենի՝ իրանական լեզուներից կատարված փոխառությունների մեջ կրոնական բնույթի բառերը (մոտ 3,5 տոկոս) անցել են բանավոր և գրավոր ճանապարհով: Դրանց մի մասը վերաբերում է իրանական հնագույն կրոնին (զրադաշտականությանը), որոնք հնաբանություններ են, ներկայացնում են օտար իրականությունը, բնորոշվում նեղ իրադրական կիրառությամբ, նվազ հաճախականությամբ, մյուսը՝ մասը՝ ընդհանրապես կրոնին, նախապաշարմունքին վերաբերող բառեր, որոնք իմաստափոխվել են և հայերենում ձեռք բերել տերմինային արժեք, ինչպես՝ *դժոխք, դրախտ, պատարագ*: Իրանական կրոնական բնույթի փոխառություններով կազմվել են բազմաթիվ բառեր և դարձվածքներ:

9. Հայ եկեղեցու նվիրապետությանը վերաբերող տարբեր լեզուներից փոխառյալ *դպիր, սարկավագ, քահանա (աբեղա), վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, կաթողիկոս* բառերից մի քանիսն իմաստային փոփոխության են ենթարկվել: Դիտարկված բառերից մի քանիսը ա) Ս.Գրքում վկայված չեն, բ) Հին և Նոր կտակարաններում տարբեր իմաստներ ունեն, գ) նորկտակարանյան են: Կրոնաեկեղեցական բառապաշարի մաս են կազմում նաև կրոնավորներին դիմելու հարգական դիմելաձևերը, ողջույնի խոսքերը, որոնք կաղապարված ձևեր են և ձեռք են բերել բառային արժեք:

10. Կրոնական բնույթի բառերից բաղադրված սրբավայր-տեղանուններից հաճախական են *աստված, աղոթք, առաքյալ, խաչ, նահապտակ, փրկիչ* բառերով կազմված սրբավայրերը: *Սուրբ խաչ* անունը կրող սրբավայրերից մի քանիսն ունեն զուգահեռ անվանումներ՝ *Տեղերի վանք, Սուրբ Սրբեփանոս Նախավկա, Ծիծռան վանք*: Անձնանուններից առաջացած սրբավայր-տեղանունների մեջ շատ են *Հովհաննես և Մեսրոպ* անուններով կազմված սրբավայրերը: *Հովհաննես Մկրտչի* անունը կրող սրբավայրերից շատերն ունեն զուգահեռ *Սուրբ Կարապետ* անվանումը: *Հովհաննես* անձնանունով կամ նրա կրճատված ձևերով կազմված

բառակապակցություն-տեղանունները երբեմն դառնում են համադրական բարդ բառեր:

11. "Չարը" խորհրդանշող սուրբգրային բառերը հիմնականում ունեցել են բառիմաստի ընդլայնում. հմմտ. ասորերենից փոխառյալ *սափանայ*-ն ունեցել է բառիմաստի ընդլայնում կցորդային զուգորդությամբ: Մեր մատենագրության մեջ եզակի վկայություն ունեցող *ազազայէլ (ազազէլ)*-ը անապատների ոգուն նվիրվող "քավության նոխազն" է, որը բարբառներում նոր իմաստներ է ձեռք բերել: *Բելխարը*՝ "անօգուտ" իմաստով, հետագայում իմաստափոխվել է և ստացել "չար, վատ" իմաստները: Նոր կտակարանում հատուկ անուն է: *Նեռ/ն/ը*, որի համարժեքը հունարեն, լատիներեն, ասորերեն, վրացերեն բնագրերում *Անտրիքրիստոս* է, հնարավոր է՝ ավելի հին ծագում ունի և առնչվում է անդրաշխարհին:

12. Կրոնանեկեղեցական տերմինահամակարգը, ըստ շերտաբանական դասակարգման, ներկայացնում է հետևյալ պատկերը՝ ընդհանուր (այս տերմինները գործածական են հայերենի զարգացման բոլոր շրջաններում), հին կամ գրաբարյան, միջինհայերենյան, արևմտահայերեն, բարբառային, ժողովրդախոսկցական, նոր տերմիններ: Այս բաղադրիչ ենթաշերտերը հանդես են գալիս տարբեր համամասնությամբ:

13. Ինչպես ընդհանուր բառապաշարում, այնպես էլ կրոնանեկեղեցական տերմինահամակարգում տարբերակվում են կառուցվածքային երկու մեծ խմբեր՝ միաբառ (համադրական) և բառակապակցական-վերլուծական: Առաջին խմբի մեջ են մտնում արմատական, ածանցավոր, բարդ, բարդաածանցավոր տերմինները: Կրոնանեկեղեցական տերմինների կազմությանը հիմնականում մասնակցում են գոյականակերտ վերջածանցները: Բարդ տերմիններին բնորոշ են տերմինային հետևյալ կաղապարները՝ S+S, S+n₂S, n₂S+S, n₂S+n₂S կաղապարները: Ըստ ձևաբանական կաղապարների՝ առանձնանում են՝ 1. ած.+գոյ., 2. գոյ.+ած., 3. ած.+ած., 4. գոյ.+բայահիմք (բայարմատ):

Բառակապակցական տերմինները հիմնականում երկանդամ կառույցներ են. միջուկն արտահայտվում է գոյականով, մյուս բաղադրիչը՝ ծավալիչը, կարող է լինել գոյական, ածական և այլն. արտահայտում են որոշիչ-որոշյալի կամ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություններ:

Ատենախոսության վերաբերյալ լույս են տեսել հետևյալ հրապարակումները.

1. Հայերենի կրոնանեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Ե., 2011, "Էդիթ պրինտ" հրատ., 288 էջ (մենագրություն):
2. Անձնանուններից առաջացած մի քանի տեղանունների մասին, Հայագիտական և զուգադրական լեզվաբանություն, Գիտական աշխատություններ, Գ պրակ, Ե., "Լինգվա" հրատ., 2003, էջ 108-113:

3. Հայ եկեղեցու նվիրապետությանը վերաբերող մի քանի տերմինների մասին, Պատմաբանասիրական հանդես, 2004 թ., թիվ 1, էջ 195-203:
4. "Պատարագ" տերմինի մասին, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Դ պրակ, Ե., "Լինգվա" հրատ., 2004 թ., էջ 143 -149 :
5. Եկեղեցու տերունական խորհուրդների անվանումները և դրանց ծագումը, "Ժամանակակից քաղաքակրթական գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում", "Գլաձոր" համալսարան (գիտական հոդվածներ), Ե., 2004, էջ 301-309 :
6. "Ագապ/ե/" տերմինի մասին, Զահուկյանական ընթերցումներ (հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր), Ե., 2006, էջ 159-165:
7. "Բեմ" տերմինի մասին, Զահուկյանական ընթերցումներ (հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր), Ե., 2007, էջ 147-155:
8. "Եկեղեցի" տերմինի մասին, Գլոբալացվող աշխարհը և հումանիտար կրթության ու գիտության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, "Գլաձոր" համալսարան (գիտական հոդվածներ) Ե., 2007, էջ 232-239:
9. Հնդեվրոպական ծագման բառերը կրոնական տերմինահամակարգում, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, պրակ 2, Ե., "Լինգվա" հրատ., 2008, էջ 121-135:
10. Ատրերենից փոխառյալ կրոնական տերմինները և դրանց իմաստային փոփոխությունները, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2008, թիվ 1-12, էջ 1-29:
11. Հունարենից հայերենին անցած կրոնական տերմիններ, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2009, թիվ 1-12, էջ 1-31:
12. "Դոխիք" և "դրախտ" բառերի մասին, Զահուկյանական ընթերցումներ (հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր), Ե., 2009, էջ 139-146:
13. Իրանական լեզուներից փոխառյալ մի քանի բառերի մասին, Զահուկյանական ընթերցումներ (հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր), Ե., 2010, էջ 254 - 265:
14. "Չոհ" իմաստն արտահայտող իրանական լեզուներից փոխառյալ մի քանի բառերի մասին, Գիտական հոդվածների ժողովածու (ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետ.մանկ.ինստիտուտ), Վանաձոր, 2010 էջ 144-158:
15. Կրոնակեղեցական տերմինների շերտաբանական վերլուծություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ (գիտական նյութերի ժողովածու), Վանաձոր, 2013, էջ 175-182:
16. Զրադաշտական կրոնին վերաբերող բառերի մասին, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վանաձորի պետ. մանկ. ինստիտուտ (Գիտական հոդվածներ. Բանասիրություն), Վանաձոր, 2013, էջ 138-149:

17. *Հոգեհաց* հասկացության և նրա բառային դրսևորման պատմությունից, Ջահուկյանական ընթերցումներ (միջազգային գիտաժողով), Ե., 2014, էջ 153-159:
18. “Նուէր” և “պաշտել” բառերի մասին, “Էջմիածին” (ամսագիր), Ա.Էջմիածին, թիվ Ե, 2015, էջ 49-54:
19. Կախարդ-հմայք-ջատուկ-կիս բառերի մասին, “Էջմիածին” (ամսագիր), Ա.Էջմիածին, 2016, թիվ ԺԲ, էջ 131-136:
20. Կրոնակեղեցական տերմինների բառակազմական վերլուծություն, “Կանթեղ”(ամսագիր), Ե., 2017, 1 (70), էջ 85-93:

Папикян Сильва Вардановна

Армянская религиозно-церковная лексика и ее историческое развитие

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.01- “Армянский язык”.

Защита состоится 17 .04. 2017 г. в 15⁰⁰ на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК при Институте языка им. Р.Ачаряна Национальной академии наук РА, по адресу: Ереван, ул. Григора Лусаворича, 15.

РЕЗЮМЕ

Работа посвящена исследованию религиозно-церковной лексики армянского языка. Данная терминология исследовалась в диахроническом аспекте начиная с V века.

Цель представленной работы – системное исследование религиозно-церковной лексики, выявление функционально-семантических особенностей этих слов в разные периоды истории армянского языка.

Научная новизна работы заключается в том, что церковно-религиозная лексика армянского языка впервые подвергается системному анализу с лингвистической точки зрения, рассматриваются происшедшие по различным причинам семантические изменения в процессе исторического развития этих слов, расширение и сужение лексического значения, развитие антонимичных значений многозначных слов, происшедшие в результате различных процессов – ассоциация, деэтимологизация, функциональные, культурные изменения, преобразования, связанные с терминацией и детерминацией и др. В исследовании впервые проведен стратификационный и словообразовательный анализ религиозно-церковной лексики армянского языка, рассмотрены внутренние источники пополнения данной терминологической системы.

Теоретическое и практическое значение работы состоит в том, что на материале церковно-религиозной лексики исследуются семантические, системные и структурные явления, присущие данным словам, выявляются их характерные особенности. Каждое терминологическое исследование имеет практическое значение. Оно может быть полезно филологам и тем, кто занимается вопросами религии и культуры. На основе представленного в приложении списка терминов можно составить словарь церковно-религиозных терминов.

Работа состоит из введения, трех глав с соответствующими разделами, выводов, списка использованной литературы и приложения.

В **Введении** представлен краткий обзор вопросов, относящихся к проблемам религии как форме общественного сознания, а также семантических изменений, которые обусловлены лингвистическими и экстралингвистическим факторами.

Первая глава - “Этимологический анализ религиозно-церковных терминов”- состоит из двух разделов. В ней рассматриваются исконно армянские слова религиозного содержания, а также заимствования из разных языков (ассирийского, греческого, иранских языков), изменения их семантики, произошедшие в ходе исторического развития. Для уточнения количества и качества семантических изменений исконно армянских слов были сопоставлены данные различных словарей, которые представлены в таблицах. Отдельно анализируются изменения в семантике заимствованных слов.

При анализе ряда слов представлены новые подходы.

Вторая глава -“Функционально-семасиологический анализ религиозно-церковных терминов”- состоит из пяти разделов. Анализ семантических изменений слова “*patarag*” (литургия), которое связано с понятием *жертвы*, как и выражения “жертва козла” и “козел отпущения”, позднее вошли в христианство. Слова, относящиеся к иерархии армянской церкви (*dpir*-дьячок, *sarkavag*- дьякон, *k^oahana*-священник, *abeia*-иеромонах, *vardapet*-архимандрит, *episkopos*- епископ, *ark^oepiskopos*- архиепископ, *kat^oorikos*- католокос), в основном – заимствования, усвоенные в аспектах узуса, семантики и др.

В процессе изучения топонимов, относящихся к церковной сфере, был проведен обзор слов *Astvac*(Бог), *aṛak^oyal* (апостол), *P^orkič^o* (Спаситель), *nahatak*(мученик), а также слов, образованных от имен собственных *Hovhannes* и *Mesrop*.

Библейские наименования, обозначающие “зло” (*azazyēl*, *bēēizebuḷ*, *beliar*, *tatona*, *neṛn*, *sadayēl*, *satana*) претерпели изменения по разным причинам. Для слова *нерн* (*neṛn*) предложено новое толкование, возводящее его не к собственному имени Нерон, а к слову *нери* - “козел”.

В **третьей главе** - “Стратификационный и словообразовательный анализ церковно-религиозных терминов”- производится стратификационный и словообразовательный анализ церковно-религиозной терминологии. В данной системе терминов были выделены а) общеармянские, б) грабара, в) среднеармянские, г) западно-армянские, д) диалектные и народно-разговорные, е) новые слова. Восполнение лексики и конкретных лексических пластов происходит двумя путями: внутренним и внешним. Внутренние источники: семантический способ (терминизация общеупотребительного слова, префиксация и суффиксация, образование сложных слов,

создание терминов в виде словосочетаний, а также ресурсы грабара, средне-армянского, западноармянского и диалектов. Внешний источник—это заимствования.

При словообразовательном анализе церковно-религиозных терминов в синхронии были выделены синтетическая и аналитическая группы. В синтетическую группу входят термины корневые, производные и сложные слова. В аффиксальных образованиях в основном участвуют суффиксы. Сложные термины представлены в терминологических и морфологических моделях. Некоторые термины продуктивны и образуют терминологические ряды. В этом лексическом слое термины, выраженные словосочетаниями, в основном двусложные конструкции, которые выражают отношение определение-определяемое или определяемое-приложение.

В **Заключении** представлены основные выводы исследования. Религиозно-церковные термины, которые своими корнями восходят к V веку, претерпели различные семантические изменения. Функциональный, семантический, стратификационный и словообразовательный анализ данного класса слов выявил особенности этой терминологической системы.

Silva Papikyan

Armenian Religious-Ecclesiastical Vocabulary and Its Historical Development

Thesis for obtaining the academic degree of Doctor of Philological Sciences on the specialty Armenian Language –10.02.01.

The defense will be held on 17. 04. 2017 at 15⁰⁰, at the session of Specialized Council on Linguistics 019 RA Supreme Certifying Commission in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (Address: 15 Gr. Lousavorich Str., Yerevan, 0015, RA).

SUMMARY

The present work is devoted to the study of Armenian religious-ecclesiastical vocabulary. The domain-specific terms have been investigated diachronically starting from the 5th century.

The aim of the present research is the investigation of religious-ecclesiastical vocabulary on the emic level of the Armenian language. It also consists in disclosing the functional-semantic peculiarities of these words in different periods of the history of Armenian.

The scientific novelty of the research is accounted for by the fact that it presents a systematic examination of Armenian religious-ecclesiastical vocabulary from a linguistic standpoint for the first time. The historical development of the semantic changes of religious words is observed in semantic widening, semantic narrowing, semantic shift conditioned by different processes: association, deetymologization, functional and cultural changes, semantic changes lead by the terminization and determinization of the words, etc.

The research material includes words concerning Armenian Church Sacraments and Church hierarchy, sacred place-names derived from words of religious nature or personal names, a number of words symbolizing the evil in the Holy Script. For the first time in this research stratificational, derivational and analytical approaches have been applied to the study of religious-ecclesiastical terms, the internal sources of enriching the terminological system have been revealed, terminological and morphological patterns have been presented.

The theoretical and practical significance of the work cannot be overestimated, for on the basis of religious-ecclesiastical data the semantic, systemic and structural phenomena are examined, peculiar characteristic features are revealed. Any kind of terminological research is of certain practical value. The results of the present investigation can, no doubt, be useful for philologists, specialists involved in problems of religion and culture. On the basis of the term glossary presented in the work a dictionary of religious-ecclesiastical terms can be compiled.

The present work consists of an introduction, three chapters with corresponding subchapters, a conclusion, a list of abbreviations, a bibliography and an appendix of term glossary.

The **introduction** is a brief reference to problems of religion as a form of social conscience. Different theories on the semantic changes of words conditioned by linguistic and extralinguistic factors are also presented here.

In the **first chapter** (Etymological Study of Religious-Ecclesiastical Terms) which consists of two subchapters, indigenous words of Armenian origin and loan words borrowed from different languages (Assyrian, Greek, Iranian languages) are investigated, and the semantic changes they have undergone in the process of historical development are discussed. To identify the semantic changes occurring in words originally Armenian the data from different dictionaries have been confronted and the results presented in corresponding tables. The discussion of words is based on original examples, their frequency count is presented according to the concordance of the Holy Script, the results are compared with corresponding examples from different languages if necessary. For a number of words many new observations have been made.

The **second chapter** (Functional-Semantic Analysis of Religious-Ecclesiastical Terms) consists of five subchapters. The investigation of the religious-ecclesiastical term **patarag (liturgy)**, words connected with the Armenian Church Sacraments and Church hierarchy, some sacred place-names derived from words of religious nature or personal names, as well as words symbolizing the evil in the Holy Script has been accomplished in this chapter. Words concerning the Armenian Church hierarchy (*dpir* – *acolyte*, *sarkavag* – *deacon*, *k'ahana* – *priest*, *abela* – *monk*, *vardapet* – *archimandrite*, *episkopos* – *bishop*, *ark'episkopos* – *archbishop*, *kat'olikos*– *catholicos*) have been adopted with semantic-functional and other features. Several of them have different meanings in the Old and New Testaments, and some are not attested in the Holy Script.

Among place-names derived from words of religious nature and personal names the lexical units *Astvats (God)*, *arak'yal (apostle)*, *P^orkič^o (saviour)*, *nahatak (martyr)*, etc., as well as sacred place-names with Hovhannes and Mesrop have been analyzed.

Lexical elements, such as (*azazyēl*, *bēēzēbu*, *beliar*, *mamona*, *nezn*, *sadayēl*, *satana*) symbolizing the evil in the Holy Script have undergone semantic changes on different bases. A new etymological explanation has been proposed for the word **ner** (*nezn*) connecting it with the notion of “male goat” (*neri*), instead of the name of the Roman Emperor Nero.

In the **third chapter** (Stratification and Word-Formation of Religious-Ecclesiastical Terms) a stratificational and derivational analyses of religious-ecclesiastical terms have been carried out. It is well known that the terminological system of any field includes different layers. In this chapter an attempt is made to differentiate the following layers: a) general Armenian, b) Old Armenian or Grabar, c) Middle Armenian, d) Western Armenian, e) dialectal and colloquial, f) new words. The enrichment of these layers takes place by internal and external means. Among internal sources particularly productive are the semantic means (terminization of general language words, prefixation and suffixation, formation of complex words, formation of terminological combinations), as well as the resources of Grabar, Middle Armenian, Western Armenian, dialects. The external source of enrichment are the borrowings.

In the process of the synchronic analysis of the word-formation of terms two groups have been singled out: synthetic terms and analytical ones. The synthetic group includes root terms, derivative terms, complex terms. Structurally complex terms are presented by terminological and morphological patterns. Some terms are productive and form terminological rows. As far as the analytical terms are concerned, they are mainly of binominal structure and express attributive and appositional relations.

The **conclusion** presents the findings of the research.